Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

900

891.71-U
U-79

Բագուայ կիրակցարեայ
Մեծերի համար
Երկսեռ դպրոց

Բագուայ կիրակցարեայ

«ԱՂԲԻՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ № 2

891.71-93
Ա-79

ԱԻԵՆԱՐԻՈՒՍ

ՀՍԿԱՅ-ՄՐՋԱՒԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ա. Պրոմիսլովի անվան
7/XI—1922
Ա. Այվազյանի անվան

1002/6713

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

Տ. ԳԻՒԶԱԼԵԱՆՑ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1884

5817

Дозволено цензурою. Тифлисъ, 4 іюня 1884 г.
Типографія И. Мартиросіанца, Орбл. ул., д. № 5

ՀՍԿԱՅ-ՄՐՋԻՒՆ

I

ՀՈՒՆՁ

Նձի ժամանակն էր։ Մրջնանոցի մօտի արտում աշխատում էին հազարաւոր մրջիւններ։ Դրանցից շատերը բրնձի հասկերի վրայ նստած մանդաղի նման սուր ծնօտիկներով կտրում էին հասած հատիկների կոթերն ու վայր ձգում։ Ցածրում սպասում էին միւսները, որոնք վերցնում, մաքրում էին վայր ձգած հատիկներն ու տանում նշանակած տեղը։

Արտում զանազան ուղղութիւնով դցած էին բազմաթիւ ճանապարհներ, որոնք ճառագայթների նման հա-

ւաքվում էին մրջնանոցի գլխաւոր մուտքի մօտ։ Այդ ճանապարհների կողքերին իրարից որոշ հեռաւորութիւնով դարսուած էին բրնձի կիտուկներ. դրանք մրջիւնների ժամանակաւոր շտեմարաններն էին։ Այդտեղ կանգնած էին ուրիշ մշակներ – բեռնակիրներ, որոնց պարտաւորութիւնն էր բրինձը տանել մինչև մօտակայ կիտուկը, ուր իրանց բեռը տալիս էին այնտեղի բեռնակիրներին, որոնք պէտք է տանէին մինչև երրորդ կիտուկը և այլն. մինչև կը հասցնէին մրջնանոցը։ Մրջնանոցում նրանց սպասում էին շտեմարանների վերակացուները, որոնք առնում էին բրինձն ու դարսոտում նշանակած տեղերում։

Այդ բոլոր աշխատանքները կատարում էին մի տեսակ սև մոխրագոյն փոքրիկ մրջիւնները։ Բայց պէտք է ասել, որ մրջմնանոցը դրանց չէր պատկանում։ Նրա տերերը այն շէկ մեծ-մեծ մրջիւններն էին, որոնք իրանց բնակարանի մօտ արևի տակ պառկած նստում էին իրար հետ։ Այդ տեղից շատ յարմար էր նրանց համար աչքի ածել ամբողջ դաշտը և նայել սեամորթ մշակների աշխատելուն։

Պառկածների մէջ մէկն աչքի էր ընկնում իր մեծութիւնով և մեծ մարմնով։ Նա, ինչպէս երևում էր, յարգանք և պատիւ էր վայելում միւսներից, որովհետև հանգստանում էր հոտաւէտ կարպետի — վարդի թերթի վրայ։ Նա իրան շրջապատող մրջիւնների մայրը – թագուհին էր։

Մայր-մրջիւնն այսօր շատ յոգնած էր երևում. ճշմարիտ ինչպէս չյոգնել։ Առաւօտուանից մինչև ճաշ նա ձու էր դնում։ Եւ ինչ էք կարծում, սիրելի ընթերցող, նա խոմ հաւի պէս մի կամ շատ-շատ երկու ձու չէր դրել այսօր, այլ ուղիղ 10,000 հատ։ Խեղճը բոլորովին ուժից ընկած, կիսաուշաթափ դուրս եկաւ մրջնանոցից մի քիչ հանգստանալու և մաքուր օդ ծծելու։ Նա իր պարտքը

կատարել էր. մնացած բոլոր չարչարանքները դարձեալ այն սև փոքրիկ մրջիւնները պէտք է կրէին։ Նա բոլորովին անհոգ էր. փառք Աստուծոյ, մտածում էր նա, մի ամբողջ խումբ ինամատարներ կան. նրանք ձուաներից ճիճու կը հանեն, որոնց կը կերակրեն, կը պահպանեն երբ որ ճիճուները մեծանան՝ կը մտնեն իրանց հիւսած պատեանի մէջ. մի քանի ժամանակից յետոյ ինամատարները կը ճրդեն այդ պատեանը և նրա մէջից դուրս կը բերեն փոքրիկ մրջիւնին։

Արեգակի տաքութիւնը թուլացրեց նրա յոգնած անդամները, և նա ննջեց։ Երբ զարթնեց, իր չաղիկ ոտերը մեկնելով մի կուշտ յօրանջեց ու յետոյ արեգակի լուսից աչքերը ճսճպեցնելով և քնաթաթախ դեմքով նայեց դէպի դաշտը։

«Այն ով է կրկին յօրանջելով ու բեխով հեռուն ցոյց տալով հարցրեց նա, — մեր շէկերիցն է երևում»։

Նա չէր սխալվում. ուր որ ցոյց էր տալիս, սեամորթ մշակների մէջ աչքի էր ընկնում ազնուացեղ շէկ մրջիւնը, որը հեռուից զանազանվում էր իրան շրջապատողներից իր մեծ հասակով և իր կաշուի փայլուն պղնձի գոյնով։ Նա վերելած հասկի գլուխը, մեծ զուարճութիւնով կտրատում էր հատիկների կոթերը։ Իր հասակի մեծութեան և ահագին ուժի շնորհիւ նա երեք-չորս անգամ աւելի շուտ-շուտ էր աշխատում, քան թէ փոքրիկ մշակները։ Երկու ոտներով պինդ բռնում էր հասկը, մօտենում էր այս կամ այն հասած հատիկին ու սկսում էր ոլորել նրա կոթը, յետոյ յանկարծ թափ էր տալիս ու պոկում. հէնց կանգնած տեղումն էլ մաքրում էր ու ցած գցում միայն խոտած հատիկները։ Նրա մօտի կանգնած մշակները դժուարութիւնով էին կարողանում կրել նրա թափած բրինձը։

— Կրծանն է, Կրծանը, մայր-մրջիւնին պատասխանեց հանգստացողներից մէկը։

—Ինչպէս երևում է ատամները քոր են գալիս. էնդուր էլ Կրծան անուն են կպցրել էՀ: Դեռ ձուից նոր էր դուրս եկած՝ իր խնամատարի ձեռները կրծոտեց: Ես ինքս էլ չգիտեմ պատճառը, երևի խնամանատարի առողջ ձեռները նրան դուր չէին գալիս, ծիծաղելով ասաց մայր-մրջիւնը.—կանչեցէք մի տեսնենք, կանչեցէք:

«Կրծան, ա՛յ Կրծան», գոռացին շէկերը:

Կրծանը չտանայեց ու երբ տեսաւ որ մայրն է կանչողը, լուռ վերեկաւ բրնձենուց և դիմեց դէպի շէկերը:

—Ա՛յ երես առած, այնտեղ ինչ էիր շինում:

—Աշխատում էի, մայրիկ, ճակատը սրբելով պատասխանեց Կրծանը:

—Աշխատո՞ւմ էիր, քմծիծաղով հարցրեց մայրը: Դու այն տեղ բրնձի յետ խաղ էիր անում, չէ թէ աշխատում: Աշխատել նշանակում է ամբողջ տարին զգուշութիւնով նայել, որ ջոկած սերմացուն խոնաւութիւն չառնի, և դրա համար էլ հարկաւոր է շուտ-շուտ ակրտալ, շուռտալ, տաք եղանակին դուրս տանել փռել արեգակի տակ: Աշխատել նշանակում է արտը մաքրել, անցեալ տարուանից մնացած արմատները պոկել, քարերը հաւաքել, վարել, հողը փափկացնել, ցանել, ջրել, քաղհանել... վերջապէս ճանապարհները մաքուր պահել: Ահա թէ ինչ է նշանակում աշխատել, և ոչ թէ երթալ քեզ պէս հատիկով դնդակ խաղալ:

—Մայրիկ, ես պատրաստ եմ այդ բոլորն էլ կատարելու, եթէ հարկաւոր է:

—Հարկաւոր լինելով հարկաւոր է, բայց դու, զաւակս, քեզ լաւ ճանաչիր. մեր մրջիւնների առածն ասում է՝ հանդարտ նստիր որ ծանր քաշես: Ախար մի լա՛ւ մտածիր էՀ. բա էլ ինչու համար են գերիները, երբ դու պէտք է գնաս այդպիսի անարժան գործով զբաղուես: Դու մի՛ մոռանար, որ շէկերի աղնիւ ցեղից ես—բուն հողագործ ես:

—Իմ կարծիքով, մայրիկ, ինչպէս դու ասացիր, ես իբրև իսկական հողագործ, ինքս պէտք է օրինակ տամ մշակներին, որոնց սիրտն այնքան չի ցաւիլ իմ ապրանքիս համար, որքան իմս:

Միւս շէկ մրջիւնները սկսեցին ծիծաղել այդ խօսքերի վրայ:

Մայր-մրջիւնը պառկած տեղից թիկնտալով կռան վրայ.

—Ինչ խելօք տղայ էՀ, ասաց նա. յանկարծ ազատ կալուածատէր մրջիւնը գնայ օրինակ տայ իր ճորտերին—գերի նեգրներին:

—Բայց, մայրիկ, չէՀ որ մարդերի մէջ նեգրներն արդէն ազատ են, անհամարձակ ձայնով ասաց Կրծանը:

—Տես թէ ում հետ է համեմատում մեզ: Իմացիր, որ եթէ մարդիկ խելօք լինէին, այդպիսի վնասակար, ուրեմն և յիմար բան չէին անիլ: Դու ի հարկէ չգիտես, որ երբ մարդկային ցեղը թափառում էր խիտ անտառներում, կերակրվում էր դանդան պտուղներով և արմատներով, մրջիւններն արդէն շատ առաջ էին գնացած: Մեր նախնիքը—շէկ մրջիւնները արդէն կանոնաւոր մրջնանոցներ ունէին, պարապում էին հողագործութիւնով: Իսկ կարմիր մրջիւնները—անասնապահները բաւականին կատարելագործած էին կաթնեղործութիւնը: Բացի մրջիւնների այդ երկու աղնիւ ցեղից, արեգակը լոյս աշխարհ բերեց և մանր մրջիւններին՝ որոնք մեզանից և կարմիր մրջիւններից անհամեմատ ցածր են՝ ու ներկեց նրանց սև—գերիի գոյնով: Այդ սև մրջիւնները մեզ համար մի պարգև էին. և մենք ինչպէս չընդունէինք այդպիսի երկնային ընծան:

—Բայց մի տեսակ սիրտս տանջվում է, ասաց Կրծանը, երբ տեսնում եմ այդ խեղճերին իրանց ուժից վեր աշխատելիս: Նրանք իրանց այդ փոքր տեղովը ստիպուած են աշխատել համ մեզ, համ էլ իրանց համար: Իսկ մենք, որ անհամեմատ ուժով ենք, ձեռքներս ծալած հանդիստ նստում

ենք։ Չեմ հասկանում թէ՝ բա էլ ինչու՞ համար է մեր ոյժը։

—Ինչպէս թէ ինչու՞ համար։ Բա ինչով ենք ձեռք բերել հէնց այդ գերիներին, եթէ ուժով չէ։ Եթէ ես այսօր զբաղուած չլինէի մանկանոցում՝ ինքս կ՚առաջնորդէի ձեզ և ցոյց կը տայի թէ ինչու համար է մեր ոյժը։ Դուք՝ սիրելի շէկեր, գլխաւորապէս զինուորներ էք։ Այդ չմոռանաք։ Ձեր կեանքի նշանաբանը պէտք է լինի քաջութիւնն ու զիւորական փառքը։ Դու ինքդ, դաւակս, քանի անգամ՝ ցոյց ես տուել քո քաջութիւնն ու անվերկիւղութիւնը։ Իսկ քաջագործութիւններից յետոյ հանգստանալը մեղք չէ։

Կրծանը լուռ լսում էր, բայց չէր կարողանում ըմբռնել մօր սասծները։ Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչու այն փոքրիկ մշակները՝ որոնք նոյնպէս մրջիւններ են, նոյնպէս խելք ու հակացողութիւն ունին՝ պէտք է ծառայեն ուրիշներին։ Բայց ինչն է ստիպում դրանց ստրուկ մնալ, կամ ո՞վ է դրանց գերի դարձրել։ Խեղճ Կրծանը, ինչքան էլ գլխին զօրտուեց, չկարողացաւ պատասխանել այդ հարցերին։

II

ՋՐՀԵՂԵՂ

Բոլոր շէկերը մրջմնանոցի մօտ հաւաքուած զրոյց էին անում իրար հետ, աննկատելի կերպով արեգակն ու երկինքը կամաց-կամաց ծածկուեցան սև ամպերով։

Յանկարծ կայծակը փայլեց ու ամպը սաստիկ դոռաց։ Կատաղած քամին՝ հողի սիւներն առաջն առած՝ քշեց հասաւ մրջմնանոցին, շէկերից շատերին երկինք բարձրացրեց, խլեց մայր-մրջնի տակից վարդի թերթն ու շպռտեց մի քանի քայլ հեռու, թէև խեղճը՝ երկու ձեռքով պինդ բռնած՝ աշխատում էր պահել իր կարպետը։

«Տուն, երեխայք, տուն», շտապեցրեց նա, և ինքը յենուած Կրծանի թևին՝ ցած իջաւ զառիվայրից, ուր պառկած էր ու վազեց տուն։ Մնացած շէկերը հետևեցին նրանց։ Լաւ էր. նրանք ժամանակ ունեցան հասնել քաղաքային դռանը։ Այնտեղ Կրծանը թողեց մօրն ու քիչ յետ ընկաւ շէկերից։

«Տէր իմ Աստուած, մտածում էր նա, այս սովորական անձրև չէ, այլ փոթորիկ է»։ Ճիշդ որ այդպէս էր. բարկացած քամին կոտրում ջարդում էր ամեն բան, ինչ-որ պատահում էր, կռացնում էր ահագին ծառերը,

պոկում էր ոչ թէ միայն նրանց տերևները, այլև մեծ-մեծ ճիւղերը, և պտտում էր օդի մէջ ու շպռտում ձգում շատ հեռու։

«Խեղճ փոքրիկ հնձուորներ, մտածում էր ինքն իրան Կրծանը, հիմի ինչ է ձեր հալը»։ Իսկ նրանք փոթորկի ահիցը թողեցին աշխատանքը, խոտեցին մի-մի բրնձի հատիկ ու վազեցին տուն։ Բայց ուժեղ քամին խլում էր նրանց ձեռքից հատիկները, ձգում էր նրանց այս կողմից այն կողմը։ Մէկ էլ յանկարծ խլացնող ամպի գոռոցի հետ փայլեց կայծակն ու սկսեց սաստիկ անձրև դալ։

Մի բոպէում մրջնանոցին շրջապատող դաշտը ալեկոծուող ծով դարձաւ։ Մեր հնձուորների դրութիւնն աւելի վատացաւ. նրանք կամենում էին շարունակել ճանապարհը, բայց քամին նրանցից ուժեղ էր ու չէր թողնում նրանց մի քայլ անդամ առաջ գնալ, այլ աւելի յետ էր մղում. իսկ վերևից վրայ էր տալի յորդ անձրևը։ Ուժից ընկած նրանք սկսեցին կամաց-կամաց ջրի տակը գնալ։ Մի-

ակ ազատուելու տեղը միայն բրնձենիքն էին, որոնց վրայ և բարձրանում էին նրանք. բայց այդ էլ մի բան չէր, քամին կռացնում էր բրնձենիքն ու կոխում ջրի տակ։

Այդ ժամանակ քամու մի ուժեղ հարուած պոկեց մօտակայ ծառի մի մեծ ճիւղ, որը՝ պտտուելով մրջմնանոցի վրայ, ընկաւ ալեկոծուող ծովի ուղիղ մէջտեղը։ Այդ բանը մի ուրիշ ժամանակ շատ վնասակար հետևանք կ'ունենար մրջիւնների համար, որովհետև փակում էր նրանց ճանապարհը, իսկ հիմա մի անսպասելի բախտաւորութիւն էր։ Նրանք շտապով, թէև մեծ դժուարութիւնով, վերբարձրացան ճիւղի վրայ ու հաւաքուեցան նրա այն մասում, որն աւելի մօտ էր մրջմնանոցին։ Թէև գլխաւոր վտանգն անցել էր, բայց նրանք իրանց դեռ ազատուած չէին համարում, որովհետև մինչև մրջնանոցը դեռ մօտ քսան մրջնային քայլ հեռաւորութիւն կար։ Խեղճերը յուսահատուած չգիտէին ինչ անէին։

Բայց օգնութիւնն արդէն մօտ էր. Կրծանը մրջնանոցի դռան մօտից նկատեց նրանց։ Նա երբ տեսաւ խեղճերին՝ ճիւղի այս ծայրից միւսը վազելիս՝ շտապեց նրանց ազատելու. ուշադրութիւն չդարձնելով ոչ քամու, ոչ էլ անձրևի վրայ, որոնք առաջուայ պէս սաստիկ էին։ Նրա հասակի մեծութեան պատճառով ջուրը նրա գօտկատեղից աւելի չէր բարձրանում։ Փոքրիկ մրջիւնները՝ երբ տեսան իրանց ազատողին, իսկոյն հաւաքուեցան ճիւղի ծայրին, և երբ Կրծանը մօտեցաւ նրանց, շատերը թռան կպան՝ որը նրա գլխիցը, որը վզիցը, որը մէջքիցը։ Կրծանը հասցրեց նրանց ցամաք ու յետ դարձաւ միւսներին էլ անցկացնելու։

Նոյն միջոցին ամպը սաստիկ գոռաց և կայծակը խփեց ուղղակի մրջնանոցին, և ինչ տեղից որ նա դեռ չնն անցաւ, մրջնանոցի կամարը ճեղքուեց։ Այդ ճեղքուածքով հեղեղը կատաղածի պէս սկսեց թափուել մրջիւնների բնակարանը։

Երբ Կրծանը շտապեց այնտեղ. տեսաւ որ սեամորթ մրջիւնները, որոնք մի ժամ առաջ հնձուորի ու բեռնակրի պաշտօն էին կատարում, այժմ որմնադիր ու դետնափորներ էին դարձել: Նրանց մէջ էին և նրանք, որոնք մի քանի վայրկեան առաջ նա խեղդուելուց ազատեց: Զարտերին կայծակը խփել էր, վիրաւորել կամ բոլորովին ածուխ դարձրել, բայց մնացածները՝ մոռացած իրանց ցաւը, զարմանալի անձնանուիրաբար աշխատում էին վերականգնել մրջնանոցը, որի մէջ նրանք ստրուկներ էին:

Նրանցից որը ցեխ էր կրում, որը կիր. մինը քար, միւսը մանր փշեր՝ բնակարանի կամարը պնդացնելու համար. մի քանիսը բարակ չոփեր էին բերում, որոնք մրջնանոցում մեծ-մեծ գերանների տեղ էին բռնում: Եւ երևակայեցէք. այս բոլորը կատարում էին դարձեալ այն փոքրիկ սեամորթները—էլօրդիները: Իսկ շէկ աղաները՝ առանց մի որևէ բան շինելու, անհոգս կերպով հանգստանում էին մրջնանոցի խորերում:

«Չեմ կարող արդեօք, սիրելիք, ձեզ մի որևիցէ բանով օգնել», մօտենալով աշխատողներին հարցրեց Կրծանը: Նրանք բոլորը միասին չարչարվում էին մի չոփ—ահագին գերան բարձրացնել. բայց ինչքան զօր էին անում, տեղից անգամ չէին կարողանում շարժել չոփը:

Կրծանի խօսքերից փոքրիկ մշակները զարմացած յետկանգնեցին: Ճիշդ զարմանալու բան էր. աղնուացեղ շէկ մրջիւնը կամենում էր նրանց օգնել:

Կրծանի համար այն գերանը կարծես մի փոքրիկ փետուր լինէր. նա կանգնած տեղից ձեռքը մեկնեց ու բարձրացնելով գերանը հարցրեց.—Ուստաղին պէտք է նեցուկ տալ:

—Այո, ձերդ աղնուութիւն:

—Էլի այդտեղ այդ ինչ ես շինում, յանդիմանական եղանակով հարցրեց մայր-մրջիւնը, որը՝ ձեռքերը կողքերին դրած, կանգնած էր քանդուածքի միւս կողմում, իսկ նրա մօտ կանգնած էին միւս շէկերը:

Կրծանը շշկլուեց, չգիտէր ինչ պատասխանէր:

—Օգնում եմ սրանց, անլսելի ձայնով պատասխանեց նա:

—Այդ քու գործը չէ, պարոն:

—Պէտք է վերջացնել, թէ չէ անձրևի հեղեղը բոլորիս էլ կը թռցնի:

—Մի վախենար, չի թռցնի, անձրևը արդէն կտրուեց:

Փոթորիկը վերջացաւ: Քամին ինչպէս երևում է խրոճաց կենդանիների ու բոյսերի վրայ և թողեց իր կատաղի խաղը. այն կայծակը, որն այնքան վնասակար էր, մրջնանոցի համար, ինչպէս երևում է, փոթորկի «մնաս բարովն» էր: Միանգամից ամեն բան հանդարտուեց: Մրջնանոցի կամարի հեղքուածքից երևաց կապոյտ երկնքի մի փոքրիկ մասը:

«Տղէրք, մի ճանապարհ տուէք, տեսնենք, ասաց մայր-մրջիւնն ու ինքնգալով անցաւ քանդուածքի միւս կողմը, յետոյ յենուելով Կրծանի թևին, հրամայեց որ իրան դուրս տանի. «այստեղ շատ տօթ է», ասում էր նա:

Կրծանը թողեց մրջիւններին ու դուրս տարաւ մօրը մաքուր օդ ծծելու:

III

ՀՍԿԱՑ-ՄՐՋԻՒՆՆ ՈՒ ԱՒԱՋԱԿ-ՍՈԽԱԿԸ։

յ, այստեղ նստենք հանգստանանք, ասաց մայր-մրջիւնը՝ ցոյց տալով մրջնանոցի մօտ մի արևկող տեղ, փոթորկից յետոյ, տես, օդն ինչպէս մաքրուեց։ Կրծանը լաւ տեղաւորուեց նրա մօտ։

— Ի՞նչ է, Կրծան, տխուր ես երևում, չլինի թէ հիւանդ ես։

—Ի՞նչի վրայ ուրախանամ, տես, մերոնցից ինչքան փչացան. նայէր, ամբողջ դաշտը սևին է տալիս։

Անձրևի ջուրը կամաց-կամաց դետնի մէջ ծծուեց, միայն փոս տեղերումն էր կանգ առել։ Քամու պառկեցրած արտի մէջ երևում էին խեղդուած մրջիւնների դեակները։ Կրծանը տեսաւ, որ ինքը մի փոքր մասն է կարողացել ազատել, մնացածները խեղդուել էին. և այդ բանը շատ տրխրեցրեց նրան։

— Մեծ անբախտութիւն է, նկատեց մայրը քրմծիծաղով. մի վախենար, դերի ձեռք բերելը դժուար բան չէ։

— Ի՞նչպէս չես խղճում. ախր նրանք բոլորն էլ միմիայն մեզ համար էին աշխատում, կիսաբարկացած ասաց Կրծանը։ Նրան զարմացնում էր մօր քարասրտութիւնը։

— Չլինի՞ թէ սիրտդ մխկրտում է դրանց համար։ Զաւակս, դու զինուոր ես, դու պէտք է քարացնես քո սիրտը։ Գուցէ հէնց էգուցուան օրը հարկաւոր լինի քանդել դրանց ազգակիցների—ուռամորթների բնակարանը։ Իսկ եթէ քո սիրտն այդպէս կակուղ կը լինի, այն ժամանակ դու ոչ մի քաջութիւն չես կարող կատարել։

— Անօգնականներին, կամ հէնց իմ անձը եթէ պաշտպանելիս լինէի, ի հարկէ այն ժամանակ ես գիտեմ ինչ կանէի։ Բայց ինչ պատիւ մեզ, գնալ այդ ճռուճ-բաճուճների հետ պատերազմել։ Թող հաւասար թշնամի պատահի, կամ ինձնից աւելի ուժեղ - զօրօրինակ մի թռչաւոր հրէշ, այն ժամանակ ես գիտեմ թէ ինչ . . .

Կրծանը դեռ չվերջացրած իր խօսքը—անտառի խորքից լսուեց սոխակի քաղցր երգի ձայնը։

— «Անունը տուր, գորգը գցիր», իր ամբողջ հաստ մարմնով դողալով ասաց մայր-մրջիւնը։ Անիծածը տես ինչ կկլկլացնում է, ձայնը կարծես զանգակի ձայն լինի, իսկ ինքն ըստինքեան բոլոր կենդանիների ամենաոխերիմ և ամե-

նավնասակար թշնամին է։ Այդ այն աւազակ-սոխակն է, որի վրայ այնքան երգեր ու հէքիաթներ են յօրինել։ Ինչպէս երևում է դեռ ուշ կը ծնուի այն հսկայ-մրջիւնը, որը կարողանար յաղթել այդ չարագործին։

Կրծանը վերցրեց մի փոքրիկ չոփ—ահագին դագանակ ու, փորձի համար, պտտեց մի իր գլխի վրայ։

Մայրը քմծիծաղով նայում էր նրա բոլոր գործողութիւններին։

— Ի՞նչ է, Կրծանիկս, դուցէ դու ես այն հսկայ-մրջիւնը։

— Հապա ինչ էք կարծում, հպարտ-հպարտ ասաց Կրծանը և կրկին դագանակը պտտեց գլխովը։

—Աենք թէ, կարելի է մեր բոլոր շէկերիցն էլ քաջ լինիս, բայց այդ անիծած հրէշի համար քո հարուածը լուի կծած կ'երևայ։

Կրծանը հասկանում էր, որ մօր ասածները ճիշդ էին, բայց բարկութիւնից չգիտէր ինչ անէր։ Նա մէկ էլ պտտեց դագանակն ու շպռտեց հեռու։ Դագանակը դիպաւ մի խումբ սևամորթ մրջիւններին, որոնք մրջնանոցից դուրս էին բերում անձրևից թռչած հատիկները, ու բոլորին էլ գետին գլորեց։

—Ապրիս, ասաց մայր-մրջիւնը։

Կրծանը ամօթից կարմրեց ու վազեց սևերի մօտ տեսնելու արդեօք հո չվնասեց նրանց։

Այդ միջոցին մրջնանոցի մօտի ամբողջ հարթութիւնը ծածկուեց հատիկներով, բոժերով, ձուերով, որը մշակները դուրս բերին չորացնելու։ Սոխակը նստած մօտակայ ծառի վրայ կարծես այդ բոպէին էր սպասում։ Նա մի ուրախ ձայն արձակեց, վերևաւ ձուերի վրայ ու սկսեց մեծ ախորժակով նրանց անուշ անել։ Սևամորթները վրէնական իրանց աղաների ապրանքն ազատելու, բայց սոխակն էր կոցի ամեն մի հարուածով նրանցից տասին այն աշխարհքն էր ուղարկում։ Շէկերը քար կտրած կանգնած էին։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅ ԲԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Պոլսոյ Ս. Ե. Հ. Թեկա
7/XI — 1922

Կրծանը առաջինն էր, որ գլուխը եկաւ և գոռալով «տղէրք ինձ հետևեցէք», յարձակուեց աւազակի վրայ։

Շէկերը նրան տեսնելով սիրտ առան, շուլլուեցին սոխակի ոտերի վրայով, մտան փետուրների մէջ ու սկսեցին քրքրել նրա մարմինը։ Վիրաւորուած սոխակը յուսահատական ճիչ արձակելով նետի պէս երկինք սլացաւ, իր հետ տանելով Կրծանին իր ընկերներով։

«Տղէրք, հիմի պրկ եկէք», ասաց Կրծանը և այն ահագին թարձրութիւնից իրան ցած գցեց։ Նրա օրինակին հետևեցին միւսները։ Գետին ընկնելով նրանք ոչինչ վնաս չստացան իրանց մարմնի դալարութեան շնորհիւ։ Մի քանի ժամանակից յետոյ նրանք հասան իրանց մրջնանոց։

«Ձատ ապրիք. ճիշդ որ քաջութիւն գործեցիք, իսկ ամենագլխաւոր փառքը, ի հարկէ, Կրծան, քոնն է. դու մի աներևակայելի քաջութիւն ցոյց տուիր»։

«Տղէրք, կեցցէ մեր հսկայ-մրջիւնը, կեցցէ մեր քաջ Կրծանը, կեցցէ՛»։

«Կեցցէ՛» միաբերան գոռացին բոլոր շէկ ու սև մրջիւնները, որոնք հաւաքուած էին այնտեղ։

—Շնորհակալ եմ, պարոններ, ասաց Կրծանը, տեսնելով բոլորի իրան ցոյց տուած սէրը, ես միայն կատարեցի իմ պարտքը։ Իմ կարծիքով ձեզնից ամեն մէկը իմ տեղ, կամ ուրիշ անգամ մի այսպիսի հանգամանքում նոյնը կ'անէր, ինչ որ ես արեցի։

— Բայց սկիզբը քոնն է, օրինակը դու ցոյց տուիր, ասում էր մայր-մրջիւնը։ Զաւակներս, շարունակեց նա դիմելով բոլոր հանդիսականներին, որովհետև այսօր բոլորս էլ հաւաքուած ենք այստեղ, լաւ կը լինի որ վճռենք մի անհետաձգելի հարց։ Այսօր երկու երկնային պատիժ հասաւ մեզ. մինը փոթորիկը, միւսը

աւազակ-սոխակը. երկուսն էլ մեծ վնաս հասցրին մեզ. մշակների կիսից շատը փչացաւ։ Իսկ մեր շտեմարանները դեռ համարեա դատարկ են. բացի այդ հաւաքած բրնձի ու ցորնի մի մասն էլ անձրևը թրջեց։ Հարկաւոր է աշխատել, լրացնել այդ պակասը, իսկ գործող ձեռքեր չունինք։

«Արշաւանք, արշաւանք դէպի սևամորթների երկիրը, միաբերան գոռացին բոլոր հաւաքուածները. և ինչպէս շէկերը, այնպէս էլ սևերը անհրաժեշտ էին համարում արշաւանքը։

—Ինչպէս երևում է, բոլորն էլ համաձայն են արշաւանք գործելուն, բայց ամենագլխաւորը դեռ մնում է, մեր ձեռնարկութեան յաջողութեան համար մի քաջ և փորձառու զօրապետ է հարկաւոր։ Դէ ասէք, ում կ'ուզէք ընտրել թռչկան գնդի հրամանատար, հարցրեց մայր-մրջիւնը։

«Կրծանին, Կրծանին, մեր հսկայ-մրջիւնին, դղրդաց ամբողջ հասարակութիւնը, կեցցէ՛ մեր քաջ զօրապետ Կրծանը»։

Կրծանը ստիպուած ընդունեց այդ պաշտօնը և յայտնեց իր շնորհակալութիւնը՝ չորս կողմը ցածր գլուխ տալով։

IV

ԱՐՇԱՒԱՆՔ

Լոր-մոլոր ճանապարհներով Կրծանը իր զօրքով շտապում էր դէպի թշնամու երկիրը, որը շէկերի մրջնանոցից երեք ժամուայ հեռաւորութիւն ունէր։ Սրանով առաջին անգամը չէր որ նա տեսնում էր թշնամու երկիրը. ոչ. նա շատ անգամ էր եղել այդ տեղերում, երբ հետևում էր շէկերի առաջուայ արշաւանքներին, որոնք առհասարակ շատ յաճախ էին կրկնվում։ Այդ էր պատճառը, որ նա կարողանում էր ամենակարճ անցքերով տանել իր թռչկան գունդը։

Ճանապարհը շատ դժուար էր. նրանք պէտք է անցնէին ահագին լեռնային գօտիներ, մօտ երկու արշին բարձրութիւնով, խոր-խոր խոռոչներ ու անդունդներ, մօտ մէկ արշին խորութիւնով։ Շատ փոսերում ջուրը դեռ չէր քաշուել, ուստի նրանք ստիպուած էին կենդանի կամուրջ

շինել՝ իրար բռնելով և մի ափից մինչև միւսը փռուելով։ Այդպիսի մրջիւններից շինած կամուրջի վրայով անցնում էր ամբողջ զօրքը։

Զնայելով այդ դժուարութիւններին, մեր Կրծանի գունդը երեք ժամ շտապ ճանապարհորդելուց յետոյ հասաւ Թշնամու երկրի սահմանին։ Սևամորթների երկիրը մի գեղեցիկ փոքրիկ մարգագետին էր, որի մէջտեղ մի բաւականին մեծ փոս էր երևում. դա նրանց մրջնանոցի գլխաւոր մուտքն էր։

Սևամորթները՝ վախենալով Թշնամիներից, որոնք միշտ նրանցից ուժեղ էին լինում՝ իրանց բունը շինել էին խորը՝ գետնի տակ։ Մեծ ճարպիկութիւնով շինուած մրջնանոցի անցքերը իրար կտրատելով, իրարից հեռանալով, դարձեալ դուրս էին գալիս գետնափոր քաղաքի գլխաւոր փողոցի վրայ, որը տանում էր դէպի գլխաւոր մուտքը։ Քաղաքային դռները միշտ բաց էին, բայց նրանց մօտ օրուգիշեր անցուդարձ էին անում բազմաթիւ պահապաններ։

Կրծանը իր գունդը կանգնացրեց մարգագետնի կողքին բարձր խոտի ետև, որը չէր թողնում սևամորթների պահապաններին նկատել Թշնամու մօտաւորութիւնը։ Բայց պէտք է գիտենաք, որ մրջիւնների հոտոտելիքը սաստիկ զարգացած է. նրանցից արձակվում է մի տեսակ քացախի հոտ, որը արդէն հեռուից զգացվում է, և բացի այդ քամին շէկերի կողմից փչում էր ուղղակի դէպի սևերի մրջնանոցը։ Այդ էր պատճառը, որ սևամորթ պահապանները միանգամից քթերը դէպի քամին արեցին ու հասկացան թէ բանն ինչումն է։

«Շէկերը գալիս են», միաձայն բարձր գոռացին պահապանները և այդ լուրը հեռագրի արագութիւնով բոլոր անցքերով անցնելով հասաւ մրջնանոցի մինչև ամենախոր մուտքերը։ Սևամորթները լաւ հասկանում էին, թէ ինչ է նշանակում այդ բաշիբուզուկների գալը, այդ պատճառով

բոլորը միասին դուրս թափեցան Թշնամու առաջն առնելու։

Այդ միջոցին Կրծանը կանոնաւորեց իր զօրքը, դասաւորեց զինուորական կարգով ու՝ անցնելով նրա առաջովը՝ ասաց.

—Տղերք, դրանց մահը մեզ հարկաւոր չէ. դրանք էլ մեզ պէս մրջիւններ են—քանի կարող էք հեռու կացէք վնասելուց. իսկ երբ շատ գլուխ կը տանեն, կամաց մի-մի ապտակ երեսներին խփեցէք. մի խօսքով աշխատեցէք քանի կարող էք սպանելուց հեռի կենալ։ Հասկացա՞ք, ինչ եմ ասում։

— Այո, ձերդ բարեձննդութիւն։

Զօրապետը նշանով իր մօտ կանչեց կողմնապահ զինուորներից մէկին, թռաւ նրա վրայ ու շտապով իր զօրքն առաջ տարաւ։

Այդ ժամանակ նրանք նկատեցին սևամորթներին, որոնք սևին տալով ու ալեկոծուած ծովի նման տատանուելով առաջ էին գալիս։ Նրանք փոքրահասակ էին, բայց թուով շատ և շատ էին շէկերից, իսկ կատաղի բարկութիւնը նրանց ամեն մէկին մի-մի փոքրիկ առիւծ էր դարձրել։ Անընդհատ շրջապատով նրանք պատեցին շէկերի փոքրաթիւ գունդն ու սկսեցին ձեռակռիւը։ Շէկերը կատարելով իրանց զօրապետի հրամանը միայն թոյլ կերպով պաշտպանում էին իրանց անձը, բայց դարձեալ նրանց մի ճկուտով խփելը թշուկների առաջին կարգից շատերին գետին էր թաւալեցնում։ Իսկ սևերը ոչինչի չէին նայում։ Յարձակվում էին շէկի վրայ, բռնում էին նրա ոտերն ու սկսում թափէթափ տալ։ Խեղճ շէկը չէր կարողանում շարժուել, այս կողմն էր իրան գցում, այն կողմն ու գրմփ գետնին կպչում։ Իսկ որնոր վէր էր ընկնում, նրա բանը վերջացած էր։ Բարձրանում էին նրա վրայ ու սկսում էին նրա մարմնու մէջ ածել իրանց մրջնային այրող հեղուկից։

Շէկերի բանը վատացաւ, նրանք իրանց կորցրին։

Միայն Կրծանը առանց շփոթուելու յետևում էր պատերազմի ընթացքին։ Կարծիք չկար, որ մի րոպէ էլ, և նրա զօրքը յաղթուած էր։

«Տղէրք, մինք վախենար, դրանք մահ են ուզում, կատարեցէք իրանց կամքը»։

Այս խօսքերով ինքը շտապեց թշնամու մէջտեղը. նա այլևս այն գթասիրտ մրջինը չէր, որին մենք առաջ գիտէինք։ Վահագնի պէս կրակ էր թափում. արծուի պէս թռչում էր թշնամու վրայով, և որ կողմը որ խփում էր՝ հնձած արտ էր դարձնում։

Սևամորթները յաղթուեցան։ Ամբողջ պատերազմի դաշտը ծածկուեց նրանց դիակներով. մնացածները փախան։ Կատաղած շէկերը կամեցան նրանց հետևել, հալածել, բայց Կրծանը յետ դարձրեց ասելով. «Ետ դարձէք, տղէրք, այդ դատն էլ իրանց բաւական է»։

Իր զեղեցիկ շէկ ձի-մրջինի վրայ նստած ու ձեռքերը կողքերին դրած, Կրծանը մօտեցաւ մրջնանոցին ու ձեռքի մի նշանով շէկերին իրաւունք տուեց քաղաքը կողոպտելու։ Մի րոպէում ամբողջ յաղթող դունդը անհետացաւ մրջնանոցի մէջ։ Մի քիչ ժամանակից յետոյ նրանք սկսեցին դուրս գալ աւարով բեռնաւորուած. մինը գնում էր մի կիտուկ բոժ մէջքին դարսած, միւսի ձեռքում թռչըտում էր նորածին մրջինը։ Սևամորթ խնամատարները, որոնք մանկանոցում անհամբերութիւնով սպասում էին պատերազմի վերջին, հիմա լաց լինելով հետևում էին իրանց սաներին. բայց խեղճերը նրանց յետ դարձնելու ոյժ չունէին։

«Փառք և պատիւ յաղթողներին. իսկ յաղթուողներին—ցաւ»։

Բայց ինչու յաղթութեան գլխաւոր պատճառը՝ քաջ զօրապետ Կրծանը, տխրեց։

V

ԵՐԿՈՒ ԶՕՐԱՎԱՐ

Դ ինչի այդպէս մտածմունքի մէջ ընկաք, պ. զնդապետ, յանկարծ մի ձայն լսուեց Համարեա Կրծանի ականջի տակ, և միևնոյն ժամանակ մէկի բեխը շատ ընտանեբար քսուեց նրա ուսին։

Կրծանը իր ձիու վրայից աչք գցեց խօսողին և տեսաւ, որ իր դէմ կանգնած էր մի յաղթանդամ մրջիւն։ Բայց նա շէկերի ցեղիցը չէր. նրա կաշին մուգ-կարմիր էր, իսկ կուրծքի վրայ կրում էր կարմիր վահան։

— Ո՞ւմ հետ պատիւ ունիմ խօսելու, զսպած ձայնով հարցրեց Կրծանը։

— Ես էլ նոյնպէս զօրավար եմ, միայն կարմիր ցեղի — անասնապահների։ Իմ անունս Ծծան է, իսկ մականունս Քաղցրապուշ։

— Շատ ուրախ եմ, պ. զօրավար, քաղաքավարի կերպով վրաբերեց Կրծանը ու իր կողմից ասաց նրան իր անունն ու մականունը։

— Հսկայ-մրջիւն—շատ լաւ մականուն է և դուք արժանի էք դրան։ Այ, տեսնում էք այն ծառը, ես նրա վրայից դիտում էի պատերազմը։ Դուք հիանալի կերպով կատարեցիք ձեր պարտքը. բայց միևնոյն ժամանակ ես կ'ասեմ որ...

— Ի՞նչ։

—Յուսով եմ, դուք չէք նեղանալ, պ. գնդապետ. ես ձեզ հետ կամենում եմ բաց, ինչպէս հաւասարի հետ, խօսել, ես...

—Շարունակեցէք, խնդրեմ:

—Ի՞նչու այնքան մրջիւնի կեանք փչացրիք, այս ասելով նա ձեռքով ցոյց տուեց պատերազմի դաշտը, ուր փռուած էին բազմաթիւ սեամորթների ու տեղ-տեղ էլ շէկերի դիակներ:

—Ինչ արած, որ առանց դրան չէր կարելի:

—Որպէս թէ չէր կարելի: Ի՞նչ էր այս պատերազմի նպատակը. դուք գերիներ էիք ուզում ձեռք բերել, չէ՞:

—Այո:

—Իսկ առանց գերիների միթէ դուք չէիք կարող եօլաղնալ: Միթէ ձեր գործերն այնքան շատ են, որ չէք կարող դուք ինքներդ կառավարել:

Նոր ծանօթը այն մտքերն էր յայտնում, որի վրայ նոյնիսկ մեր Կրծանը շատ և շատ անգամ էր մտածել, և որի համար քիչ ժամանակ սրանից առաջ մայր-մրջիւնը ամաչացրեց նրան միւս ընկերների առաջ: Նա էլ քիչ չէր ցանկանում վերջ տալ ճորտութեանը—այդ անիրաւացի կերպով ուրիշի աշխատանքը իրան սեպհականացնելը. միայն ինչ արած, նա գիտէր, որ մէկ մարդը դաշտում դեռ զինուոր չէ դառնում: Բայց նա չուզեց օտարի մօտ դատապարտել շէկերին. ուստի այդ բոլորի մասին լռեց ու, կամենալով իր ցեղի իսկական ներկայացուցիչը դառնալ, ասաց.

—Ես ամենից առաջ զինուոր եմ և պէտք է, որ ես իմ զինուորական պարտականութիւններս կատարեմ:

—Դեռ արդարանում էլ էք, ծիծաղելով ասաց Կրծանը, Qui s'excuse-s'accuse, monsieur. (Արդարանալովդ դուք քեզ մեղադրում ես, պարոն): Իսկ մի քիչ սրանից առաջ դուք այնքան տխրած էիք, որ տեսնողը կը կարծէր թէ յաղթուածը դուք էք: Կ'ուզէք ես ձեզ կը յայտնեմ դրա պատճառը.

Հոգով դուք իսկապէս յաղթուած էք. ձեր խիղճը տանջում է որ այնքան ձեզ նմաններին կեանքից զրկեցիք:

—Երբէք ինձ նմաններին չէ, բարկացած ձայնով ասաց Կրծանը և կամենում էր շարունակել խօսքը, բայց յանկարծ ձայնը կտրեց:

Այդ ժամանակ նրանց մօտով անցնում էր շէկերի վերջնապահ զօրքը: Յանկարծ նրանց աչքին ընկաւ մի յաղթանդամ շէկ, որը մէջքին դրած զժուարութիւնով տանում էր մի ահագին հարսեակ: Իսկ հարսեակի կաշուից բռնել էին երեք սեամորթներ ու աւելի զժուարացնում էին մրջիւնի շարժուելը:

—Ձուտ թողէք դրան, մեղմօրէն բայց հրամայական ձայնով ասաց Կրծանը երեք թզուկներին:

—Ոչ, պարոն, չի կարելի, լաց լինելով ասացին նրանք: Այս իշխանական հարսեակ է. սեամորթների ապագայ մայր և թագուհին է, կաշուի արանքից երևում է, ինչպէս խեղճը թռպրտում է:

—Վերջին անգամն եմ ասում թողէք, սպառնողական ձայնով ասաց Կրծանը:

—Էն սուրբը վկայ չենք կարող, ախար մենք դրա խնամատարներն ենք:

Կրծանը էլ աւելի ոչինչ չասաց. ձիւցը ներքև իջաւ, հասաւ սեամորթներին ու մի ձեռով որ չբռնեց, մեր երեք թզուկները ամեն մինը մի-մի կողմը թռան: Բայց խեղճ փոքրիկ իշխանուհու բանն էլ վատացաւ, որովհետև խնամատարները այնպէս պինդ էին բռնել հարսեակից, որ Կրծանի բռնելուց նրա բարալիկ կաշին ճղուեց ու միջից կծկուելով և գալարուելով դուրս եկաւ մրջնաճուտն ու ընկաւ գետին:

Կրծանը մեծ ուշադրութիւնով վերցրեց նրան գետնից և դրեց շէկի ձեռների մէջ:

—Ա՛ռ տար, միայն նայիր զգուշ կաց, վայը չգցես,

—Ներողութիւն, գնդապետ, որ խառնվում եմ ձեր

գործի մէջ, սակայն Ծծանը, որը լուռ ու մեծ ուշադրութիւնով նայում էր այս պատկերին։ Սակայն խնդրեմ, այս խեղճի վերջը ինչ պէտք է լինի։

—Ինչ-որ միւսներինը. կը պահենք, կը մեծացնենք, իսկ յետոյ...

—Յետոյ գերի կը դարձնէք։

—Այո։

—Չեղ ինչ օգուտ մի մշակից, իսկ այստեղ—իր տանը, այդ իշխանուհին, իբրև մայր-մրջիւն, հարիւր հազար ձու կը դնի, որոնցից դուրս կը գան այնքան էլ աշխատասէր սեւամորթներ...

—Որոնց իր ժամանակին կարող էինք նոյնպէս գերի տանել, ծիծաղելով նրա խօսքը կտրեց Կրծանը։ Իրաւ որ, ո՞ւն է աւելի ձեռնտու այս բոպէիս մի մշակը, թէ՞ քիչ ժամանակից յետոյ հարիւր հազարը—ինչ ասել կ'ուզի որ հարիւր հազարը։

Նա ձեռքով արեց երեք սեւամորթներից մէկին.—Առ յետ տար ձեր իշխանուհուն։ Կարո՞ղ ես տանել։

—Այո, կարող եմ, շատ շնորհակալ եմ, պարոն։

Իր ահագին բեռի տակ կուացած նա անհետացաւ մրջնանոցում։ Նրա ընկերները ուզում էին նրան հետեւել։

—Դուք ո՞ւր, ա՛յ չոռիկալածներ, նրանց առաջը կտրեց Կրծանը. դէ յե՛տ։ Յետոյ նա նշան արեց իր մօտ կանգնած երկու շէկերին—հարսեակ տանողներին ու իր ձիուն և հրամայեց. «Տարէք սրանց ուր հարկաւոր է»։ Գերուածներն ընկան նրա ոտքերի տակ ու միաբերան ճչացին. «Ման, աղա-ջան, մեզ վնաս մի տար»։

—Ձիշտ, դրանցից ինչ օգուտ, դարձեալ մէջ մտաւ Ծծանը. փոքրիկներին տանել հասկանալի է—նրանցից անիսօ արարածներ, անիսօ ծառաներ կը դարձնէք. իսկ մեծերին ինչ պէտք է անել, լա՛ւ իմացէք, որ հասակ առած թշնամին՝ միշտ թշնամի կը մնայ...

Ճիշտ որ ուղիղ էք խօսում. յանկարծ միւսներին էլ իրանց հետ կ'ապատամբացնեն։—Դէ՛, սիրելիներս, դարձաւ նա դէպի սեւամորթները, շնորհակալ եղէք Աստուծուց և այս պարոնից։ Դէ՛, դէպի ձախ, ու՝ յառաջ։

Սեւամորթները ի հարկէ էլ կրկնել չտուին հրամանը, և շտապով վազեցին տուն։

—Տղէ՛ք, դուք էլ գնացէք, դարձաւ Կրծանը դէպի իր երկու ստորադրեալները։ Տանն ասէք որ ես էլ հիմա կը դամ։

Զօրավարները մենակ մնացին

—Ճիշտն ասած, ես շատ եմ ցանկանում ձեզ հետ մի քիչ էլ խօսել, ասաց Կրծանը իր նոր ծանօթին։ Մեր շէկերը ձեր կարմիր ցեղը իրանց հաւասար են հաշվում։ Բայց ասացէք, խնդրեմ, մի՞թէ դուք առանց գերիների կարողանում էք կառավարուել։

—Լա՛ւ։

—Իրաւ է, կարծեմ դուք մի այնպէս շատ գործեր չունի՞ք։

—Մի՞թէ... Մենք էլ ձեզ պէս ձմռան պաշար ենք հաւաքում, ձեզ պէս կրթում ենք մեր մանուկներին և այլն և այլն։ Բացի այդ մենք այնպիսի աշխատութիւն ունինք, որը դուք ամենևին չունի՞ք, այն է կաթնագործութիւնը։

—Մի՞թէ դա մի դժուար բան է...

—Հեշտ էլ չէ։ Ձեզ կամենալ արդեօք ինքներդ ձեր աչքով տեսնէ՞ք ու իմանա՞ք հեշտ է թէ դժուար։ Թէև օտարներին մենք մեր մրջնանոցը չենք թողնում, բայց ձեզ համար այսօր բացառութիւն կ'անենք. իսկ ձեր կեանքի ապահովութեան մասին՝ դինուորականի աղնիւ խօսք եմ տալիս։ Կը կամենա՞ք։

Նա բաց սրտով իր երկար բեհը Կրծանին մեկնեց, իսկ վերջինս էլ պինդ շարժեց, ասելով։

—Մեծ ուրախութիւնով ընդունում եմ ձեր սիրալիր առաջարկութիւնը։

VI

ԿՈՎԱՑԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Նասնապահ-մրջիւնների թագաւորութիւնը սեւամորթների մրջնանոցի միւս կողմումն էր տեղաւորուած: Անցնելով անտառի խիտ մասը, մեր երկու զօրավար-մրջիւնները շարունակեցին իրանց ճանապարհը նրա կողքով: Ճանապարհի վրայ նրանք նկատեցին մի շքեղ մասրենի, որի վրայ շարուած էին հաղարաւոր բացուած մասրի վարդեր:

— Այ, այդ մեր սերմնարաններից մէկն է, ասաց Ծրծանը ցոյց տալով ծառը: Մի քիչ սպասեցէք, ես իսկոյն ցած կը դամ:

Եւ մի ակնթարթում նա բարձրացաւ մասրենու վրայ: Կրծանը զարմացած հետաքրքրութիւնով նայում էր նրա ետևից: Ծծանը՝ նստելով մի մասրի վարդի մէջ, աշխատում էր պոկել ծաղկի թերթից բաց-կանաչ ափիսը, այսինքն բոյսերի միջատին:

— Մի քիչ յետ կանգնէք, պ. գնդապետ:

Կրծանը հաղիւ կարողացաւ մի քանի քայլ յետ կենալ, մէկ էլ յանկարծ ափիսը կպաւ գետնին համարեա նրա ոտների տակ: Իսկ նրա ետևից ծառիցը ներքև թռաւ ինքը Ծծանը: Նա մօտեցաւ դէպի ափիսին, հոգացողութիւնով կռացաւ դէպի նրան ու քաղցր ձայնով ասաց.

— Յուսով եմ, սիրելիս, որ ոչ մի վնաս չեղաւ քեզ:

Իսկ կոլոր ու չաղլիկ ափիսը, ինչպէս որ ընկաւ մէջքի վրայ, այնպէս էլ մնաց. միայն կնճթաձև դնչիկն այս ու այն կողմն էր դարձնում ու ոտները շարժում օդի մէջ:

— Յիմար անասուն, ճշմարիտ. ոչինչէն ոչինչ չէ հասկանում, նկատեց Ծծանը,—կով է մէկ խօսքով, բայց մի նայեցէք ինչ բան է: Թէև հասարակ ու կանաչ տեսակիցն է, բայց ինչքան չաղ է ու ինչ էլ կաթնալի է երևում: Կարծես հասած խաղողի հատիկ լինի:

— Ուրեմն դուք ուրիշ դոյնի ու տեսակի էլ կովեր ունէք, զարմացած հարցրեց Կրծանը:

— Ի հարկէ. համբերեցէք, իսկոյն ինքներդ կը տեսնէք: Բայց սրա կաթն էլ առաջին տեսակիցն է երևում, ապա մի համը տեսէք: Նա իր բեխով սկսեց քորել ու խուտուտ տալ ափիսին, որը մի կաթիլ պարզ հեղուկ դուրս հանեց:

— Իսկ դո՞ւք, ասաց Կրծանը:

— Խնդրեմ, եթէ կարելի է. իմ մասին նեղութիւն մի՛ք քաշիլ. ես տնեցի եմ, երբ և որքան կամենամ կարող եմ խմել, իսկ դուք ոչ: Բացի դրանից պատերազմից յետոյ ձեր կոկորդը այրուելիս կը լինի:

Կրծանը կռացաւ ու ախորժակով կուլ տուեց կաթիլը, յետոյ շրթունքները լիզեց, բեխերը սրբեց ու ասաց.

— Ի՜նչ զովացնող բան է, ի՜նչքան էլ քաղցր է:

— Վարպետն իր գործը լաւ է իմանում, ինքնահաւան կերպով ասաց Ծծանը, բա խօմ զուր տեղը չեն մկրտութեանս անունը Ծծան դրել, իսկ մականունս Քաղցրապուշ:

— Դուք դրան այստեղ կը թողնէք:

— Ոչ, պատասխանեց Ծծանը, ժամանակով կարող է պէտք գալ։

Նա վերցրեց ափիսին ու, որպէս մի փոքրիկ կապոց, դրեց իր կռան տակ. իսկ միջատը բնազդմամբ հասկանալով որ իրան ոչ մի վնաս չեն հասցնելու, պինդ կպաւ Ծծանի կաշուից։

Մեր բարեկամները չէին շտապում։ Թոտենալով անասնապահների մրջնանոցին, նրանք սկսեցին պատահել Ծծանի ցեղակիցներին։ Նրանցից որը հատիկ էր տանում, որը քոլ կամ չոփ. շատերն էլ Ծծանի նման ափիս էին տանում։ Երբ հաւասարվում էին իրանց զօրավարին, մեծ յարգանքով գլուխ էին տալիս նրան ու շարունակում իրանց ճանապարհը դէպի մրջնանոց։

Վերջապէս հեռուում հարիւրամեայ կաղնու տակ երևեցաւ անասնապահների մրջնանոցի ահագին գմբեթը։ Քաղաքային մուտքի առաջ մի խումբ երիտասարդներ հաւաքուած՝ զինամարզութիւնով էին զբաղուել — գօտեմարտում էին կամ թէ չէ իրար երեսներին սաստիկ ապտակներ էին հասցնում։

— Ուրեմն դուք զինուորական դաս էլ էք ունեցել. հապա դուք ինձ ասում էիք թէ . . .

— Ոչ, դուք սխալվում էք, սրանք զինուորներ չեն, այլ կամաւոր զինուորական աշակերտներ։ Մենք արշաւանք երբէք չենք գործում, բայց մեր ամեն մի քաղաքացին պարտաւոր է իր մրջնանոցը պաշտպանել. դրա համար և մեր երիտասարդները պատրաստվում են։

Նրանք մտան մրջնանոցը։ Պատահող անասնապահ մրջիւնները զարմացած նայում էին Կրծանին՝ մտածելով թէ ինչպէս էր նա այս տեղերանքը ընկել։ Բայց որովհետև իրանց զօրավար Ծծանը նրա հետ էր, այդ պատճառով նրանք ոչինչ չէին ասում, միայն լուռ ու մունջ քաղաքավարի ճանապարհ էին տալիս։

— Ես կարծեմ ցորնի հորերն ու ամբարները ձեզ չեն հետաքրքրի, խօսեց Ծծանը, որովհետև ձերոնցի

նման են ու բացի դրանից հիմի բոլորովին դադարել են. մանկանոցն էլ կարծեմ չարժէ տեսնել — նոյնն է, ինչ-որ ձերը, միայն թէ դայեակները էլօրդի չեն, այլ մեզանից։

— Իսկ այս նախասենեակը ո՞ւր է տանում, հարցրեց Կրծանը։

— Դէպի մեր մայրիկի առանձնարանը, ձայնը ցածրացրած պատասխանեց Ծծանը։ Ձեզ ուղիղն ասեմ՝ նա շատ ատում է, երբ նրան մէկը տեսնում է ձուանոց վրայ նստած, իսկ դուք բացի դրանից օտար մարդ էք . . .

— Ձէ, անհոգ կացէք, ես ոչ մի բանով չեմ համաձայնել գնալ այնտեղ։ Բացի դրանից ասում են դա այնպիսի մի բան է, որ կարող է աչք դիպչել. այլ միայն ես կը կամենայի ձեր կաթնագործութիւնը տեսնել։

— Ուրեմն եկէք գնանք։

Նրանց առաջ բացուեց մի ահագին դետնափոր դահլիճ։ Ամբողջ հատակի վրայ հաւասար կարգով շարուած էին ձաւարի նման մանր հատիկներ։ Կարգերի միջով անց ու դարձ էին անում կարմիր մրջիւններ, որոնք այն հատիկների վրայի հողն էին սրբում, — լիզում էին նրանց։ Ջատերը կռանում էին ու ուշի-ուշով ականջ դնում հատիկներին։

— Այդ ինչ ձաւար է հարցրեց Կրծանը. մրջիւնի ձու է, ինչ է, և ինչու՞ են այնպիսի ուշադրութիւնով ականջ դնում նրանց։

Ծծանը խորհրդաւոր կերպով ծիծաղեց։

— Իսկոյն կը հասկանաք, ասաց նա, միայն ուշադրութիւնով նայեցէք։ Այդ ժամանակ այն ականջ դնող մրջիւններից մէկը վերբարձրացրեց հատիկը, կրծոտեց նրա կաշին և միջից դուրս հանեց մի դեղեցիկ կոլորիկ ափիս։

— Հա՜... հասկացայ բանն ինչումն է, ասաց Կրծանը, այդ նորածին հորթ է, չէ՞։

— Այո, մենք նրան կը պահենք, կը պահպանենք օրօրոցումը, կը մեծացնենք, յետոյ դուրս կը թողնենք։

Հիմա գնանք տեսնենք թէ նրան ինչպէս են տեղաւորում։

Խնամատար մրջիւնը մեծ զգուշութիւնով վերցրեց նորածին հորթին ու մանկանոցից դուրս տարաւ։ Մեր երկու զօրավարները հետևեցին նրան։ Մինչև այժմ մութը պատել էր ամեն բան, նրանք միայն իրանց մրջնային սուր աչքերի շնորհով կարողանում էին զանազանել շրջապատող առարկաները։

Նախասենեակի վերջում նրանց առաջ լոյս երևեցաւ ու նրանք դուրս եկան մի արձակ տեղ։

Դա մի գետնափոր դաշտ — արօտատեղ էր. մրջնանոցի առաստաղից բացուած էր մի ճեղքուածք, որտեղից ներս էին թափում արեգակի աղօտ ճառագայթները։ Այդ լոյսը բաւական էր այն տեղի բոյսերի կեանքը պահելու։

Խնամատար մրջիւնը փոքրիկ ափիսին մօտեցրեց մի բոյսի, նա տզրուկի նման պինդ կպաւ ու սկսեց ծծել։ Միւս բոյսերի վրայ էլ նոյնպէս շարուած էին փոքրիկ հորթեր։ Հեռուից նայողը կը կարծէր թէ ամեն մի բոյս կոճակներով է շարուած։

Կրծանի բերանը բաց էր մնացել. նա լուռ հիացմունքով նայում էր այս բոլորին, և կարողացաւ միայն այս ասել՝ «զարմանալի է»։

— Ի՞նչպէս է, ինքնահաւան հարցրեց Ծծանը. բայց այս դեռ ծաղիկն է, պտուղը յետոյ ենք տեսնելու։

Գետնափոր անցքերը գնում էին աջ-ձախ, մօտենում էին իրար, հեռանում, ճանապարհ էին բաց անում ահագին արմատների կամ տակովը և կամ վրայով։

— Մեր անասունը ձմեռը այս արմատների վրայ է աարծում. իսկ միւս ժամանակները նրանց գիշերները քշում ենք անում այստեղ. սա մեր գոմն է, այսինքն անասնանոցը։

— Իսկ ձեր անասունը հիմա ո՞ւր է, հարցրեց Կրծանը։

— Դաշտումն է։

Դարձեալ լոյս երևեց. բայց այս անգամին լոյսն այնպէս աղօտ չէր, ինչպէս առաջին անգամ։ Արեգակի ճառագայթները իրար բոթբրթելով ներս թափուեցան ու տարածեցին աչք ծակող լոյս և նախասենեակը բարձրանալով նրանց հանեց հողի երես, ազատ օդի մէջ։

Նրանց առջև բացուեց մայրմանող արեգակի ճառագայթների տակ փռուած կանաչ դաշտը. դա պատած էր հողային պատնէշով, ի հարկէ նրա համար որ անասունը հեռու չգնայ արածելու։ Խոտի թերթերի, ճիւղերի ու արմատների վրայ արածում էին կարմիր մրջիւնների զանազան տեսակ կովերը։ Այստեղ կային՝ կոլոր, տանձանման, տափակ, մուգ-կանաչ, վարդագոյն, սպիտակ, մինչև անգամ և շերտաւոր ափիսներ։

Կրծանը աչքերը չռած միայն նայում էր։

— Հիմի յուսով եմ, որ դուք համոզուեցիք, թէ կանոնաւոր անասնապահութիւնը հեշտ բան չէ։ Մի մօտեցէք տեսէք, քանի-քանի տեսակներից են, ու իմացէք որ մէկը միւսից լաւ է։

— Դրանց կաթն էլ զանազան է՞, հարցրեց Կրծանը։

— Ի հարկէ. փորձեցէք տեսէք։

— Շնորհակալ եմ, ես կուշտ եմ։

— Յատկապէս խնդրում եմ. ինչպէս կ՚ուզէք, ես կթեմ, թէ դուք ինքներդ։

— Եթէ այդպէս է, ուրեմն թողէք որ ես կթեմ. դա շատ հետաքրքիր է։ Կրծանը կանգնած էր վարդագոյն ափիսի մօտ. նա կռացաւ դէպի վերջինը և իր բեկի ծայրով քորեց մէջատի մէջքը. նա իսկոյն բացթողեց մի կաթիլ վարդագոյն հեղուկ, որը Կրծանը խմեց։

— Հիմի էլ անանասից, եթէ կարելի է, ասաց Ծծանը ու մօտենալով մուգ-կանաչ ափիսին, քորեց նրա մէջքը, և նա դուրս թողեց մի կաթիլ կանաչ գոյնի։

— Արդէն հոտից երևում է որ անանաս է, ասաց Կրծանը։

— Չէ, մի համը տեսէք, համը։

Անանասիցն էլ անուշ արեց մեր Կրծանը։

— Իսկ այս մեր շամբանեան դինին է—մեկոնի ցող է, ասաց Ծծանը, մօտեցնելով Հիւրին շերտաւոր ափիսին։

—Հաւատացէք չեմ կարող, ասում էր Հիւրը, ահա կոկորդիս է հասել։

—Բայց և այնպէս համը տեսէք. գոնէ մի կաթ, խնդրում եմ։

Ինչ արած, տան տիրոջը չնեղացնելու համար՝ մեր Կրծանը հարկադրուած էր նրա համն էլ տեսնել։ բայց հազիւ թէ մի կաթիլ բերանն էր առել, յանկարծ գլուխը յետ գցեց, ձեռքերը տարաւ դէպի կուրծքն ու աչքերը շաղուեց։ — Զգիտեմ այս ինչ պատահեց ինձ, ասաց նա. բոլոր առարկաները սկսեցին չորս բոլորս պտուտ գալ, բայց հոգիս այնպէս խաղաղ է և այնպէս ուրախութիւն եմ զգում, որ սիրտս ասում է վերկաց ու մի լաւ պար եկ։

— Հը՞ը, խօսեց Ծծանը, ինչպէս երևում է մեկոնը ձեր գլխին խփել է. ոչինչ շուտով կ'անցնի։ Բայց դուք այն ասէք. ինչպէս է, անմահական բան է, չէ՞։ Ահա այս էլ մեր փոքրերին են բերում։

Մրջնանոցից դուրս եկաւ դայեակների մի ահագին խումբ ու դիմեց դէպի արօտատեղը։ Նրանց ամեն-մէկը տանում էր մի-մի մրջնաճուտ։

Միևնոյն կովին մօտեցնում էին մի քանի մանուկ մրջիւններ, որոնք ագահութիւնով ծծում էին դայեակների կթած կաթը։

—Դրանց օրը երեք անգամ են կերակրում մեզ մօտ —առաւօտեան, կէսօրին և երեկոյեան քուն դնելուց առաջ։ Իսկ օգուտ է թէ ոչ այդպիսի կերակրելը՝ դուք կարող էք դատել նրանց վրայ նայելով։ Մի տեսէք փորերը ինչ տկզած են։ Բայց ճշմարիտ, ինչ լաւ կը լինէր, եթէ դուք էլ մեզնից օրինակ վերցնէիք, խօսքը փոխեց Ծծանը։

—Ես էլ հէնց հիմա դրա մասին էի մտածում, լրջօրէն պատասխանեց Կրծանը։

—Դրանով գուցէ կարողանայիք և գերութեանը վերջ տալ։

—Ոչ, դա դժուար բան է... դեռ շուտ է։

Բայց և այնպէս փորձեցէք։

—Ժամանակով, գուցէ. իսկ այժմ... մեր խօսակցութիւնը միւս անգամի թող մնայ. հիմա ուշ է. ինձ գնալու ժամանակ է. տեսնում էք՝ արևն արդէն մայր է մտնում։

—Գիշերը մեզ մօտ հիւր մնացէք։

—Ոչ, ոչ, առանց այն էլ ես ձեզ այսօր շատ անհանգստացրի։ Չէ՞ կարելի արդեօք, որ հէնց այստեղից անցնեմ. մէկէլ մրջնանոցը չմտնեմ։

—Ինչու չէ, կարելի է։

Նրանք հասան պատնէշի գլուխն ու սկսեցին մնաս բարովել։

—Ես երբէք չեմ մոռանալ ձեր հիւրասիրութիւնը, ասաց Կրծանը, և շատ կը ցանկանայի, որ դուք էլ շնորհ բերէիք մեր կողմերը։ Իմացէք որ այսօրուանից ես ձեր ամենահաւատարիմ ընկերն եմ. խօսք եմ տալիս որ ինչ կ'ուզէ լինի, երբէք թշնամաբար չվերաբերուիլ դէպի ձեզ։

Նա վերջին անգամ դրկեց իր նոր ընկեր-բարեկամին և պատնէշից ցած թռաւ։

Միայն այն երեկոյ նա տուն չկարողացաւ հասնել. ճանապարհի հեռաւորութիւնը յոգնեցրեց նրան, պատերազմն էր վատ ազդել վրան, թէ մեկոնի ցողը, որ նրա ծնկները ծալուեցան, յայտնի չէ, դրա մասին պատմութիւնը լռում է։ Միայն ասում են կէսը չանցած՝ նա դուրս եկաւ ճանապարհից, պառկեց խոտի վրայ ու խոր քուն մտաւ։

VII

ՄՐՋԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Էկերի մայր-մրջիւնը հանգստանում էր դարձեալ մրջնանոցի մօտի փոքրիկ բարձրութեան վրայ, և թիկնապահները դարձեալ պատել էին նրա չորս կողմը:

—Ո՞ւր կորաւ այս մեր քաջ զօրավարը, ասում էր նա աչքերը փակելով արեգակից ու հեռուն նայելով:

—Հրէն գալիս է, հրէն, նրա հարցին պատասխանեց շրջապատողներից մինը:

—Ո՞ւր է, ո՞ւր է, հետաքրքրութիւնով հարցրին շատերը:

—Այ, նայեցէք, հրէն լուսածաղկի մօտ:

—Այո՛ նա է, բայց այն ինչ է պատահել նրան. ինչու է այնպէս տխուր առաջ գալիս: Տես ինչպէս բեխերը շարժում է, կարծես ինքն իր հետ խօսելիս լինի: Տէր իմ Աստուած. չլինի ցնորուել է, ասում էր մայր-մրջիւնը:

Բայց չէ, ահա ուրախ դէմքով բարև է տալիս չորս կողմը: Իսկ ամբոխը, ամբոխը. տեսէք նա ինչ է անում, ամեն մէկը թողեց իր գործը ու դիմում է դէպի նրան: Հանաք խօսմ չէ. իրանց քաջ զօրավարին են հանդիպում: Տեսէք, տեսէք, նրանք առաջ են գալիս, ամեն մէկը կամենում է նրա ձեռքը սեղմել: Բոլորը սեղմվում են նրա չորս կողմը, այնպէս որ մարդ շունչ քաշել դժուարանում է: Տես, տես, նա ինչ-որ նրանց ասում է ու առաջ է գալիս, ամբոխը նրան է հետևում, այդ ինչ են գոռում, ինչ է պատահել, ինչ նոր բան:

—Ժողով, ժողով, լսելի եղաւ այն ահագին ամբոխի դղրդոցը:

—Ժողո՞վ, ինչու չէ, երբ ժողովուրդը այդպէս է կամենում: Գնանք, մեր տղերք, ասաց մայր-մրջիւնը դառնալով շէկերին:

Երբ մայր-մրջիւնը ցած իջաւ իր թիկնապահներով և հասաւ քաղաքային գլխաւոր դռանը, խուռն սեւամորթ ամբոխը պատեց նրան, այնպէս որ նա մեծ դժուարութիւնով կարողացաւ ներս մտնել մրջնանոցը իր ընկերների հետ: Իսկ երբ հասաւ նա կենդրոնական ստորերկրեայ դահլիճը, ուր լինում էր սովորաբար ազգային ժողովը, ահագին դահլիճը այնպէս էր լցուել սեւամորթներով, որ ասեղ գցելու տեղ չկար: Դահլիճի մէջտեղում, մի փոքրիկ քարի վրայ բարձրացած կանգնած էր ինքը Հսկայ-մրջիւնը:

—Սիրելի կարմիր և սև համաքաղաքացիներս,—այսպէս սկսեց Կրծանը իր ճառը, երբ ամբոխը փոքր ինչ լռեց,—երեկուայ կռուից ես տուն չվերադարձայ. դուք հասկանում էք, ի հարկէ, թէ ինչո՞ւ համար: Այո, ես մենակ չէի կամենում ստանալ երախտագէտ ժողովրդից այն պատիւը, որը իսկապէս պատկանում է ամբողջ զօրքին: Ամեն ազնիւ մրջիւն կատարեց իր պարտականութիւնը, իսկ ինչ վերաբերում է իմ զինուորներիս, ձեռքս սրտիս դրած կա-

բող եմ ասել, որ նրանց ամենավերջինից սկսած մինչև ամենաառաջինը զարմանալի անձնուիրութիւնով կատարեց իր վրայ դրած պարտականութիւնը։ Ուրեմն միթէ ես իրաւունք ունէի աւելի մեծ պատուի արժանանալ, քան թէ միւսները։

— Շատ գեղեցիկ, կ՚ցցես. և մի տեսակ հաւանական ուրախ ժպիտ երևեց Հանդիսականների երեսին։

— Իսկ ինձ մի ուրիշ բան յետաձգեց, շարունակեց Կրծանը։ Ես պատահեցի անաանապահ-մրջիւնների զօրավարին, դուք, ի հարկէ, ամենքդ էլ լսած կը լինիք նրանց մասին, նա այնքան սիրելի զտնուեց դէպի ինձ, որ հրաւիրեց ինձ գնալ տեսնել իրանց կովալին թագաւորութիւնը։ Ես, ի հարկէ, մեծ ուրախութիւնով ընդունեցի նրա հրաւերը։

— Մ՞ս, ուշադրութիւն, լսեցէք, լսուեց այս ու այն կողմից։

— Սիրելի համաքաղաքացիներս, շարունակեց Կրծանը, ես ձեզանից ոչ մի բան չեմ թաքցնելու, բոլորը մի առ մի կը պատմեմ։ Դուք ամենքդ էլ գիտէք, որ թէև ամբողջ մրջնային ցեղը կարմիր անաանապահ-մրջիւնիներին մեղ հաւասար է հաշվում, բայց և այնպէս մեր ամեն մի հողագործը իրանից անհամեմատ ցածր է դասում անաանապահներին։ Իսկապէս հէնց այդպէս էլ է. հողագործութեան վրայ նրանք, կարելի է ասել, ոչ մի հասկացողութիւն չունին։ Իսկ եթէ վերցնենք կաթնագործութիւնը, այն ժամանակ ուրիշ բան է։ Այդ արհեստը նրանց մէջ այնքան է զարգացած, որ նրանով շատ յաջող կարող են մրցել մեր հողագործութեան հետ։ Ճիշտն ասած՝ նախանձս շարժուեց։ «Ախար այդ ինչ զարմանալու բան ես տեսել նրանց մէջ», դուցէ հարցնէք։ Ահա թէ ինչ, ամենքդ էլ կը ցանկանայիք, ի հարկէ, ամառուայ այն սաստիկ տապին մի թթուաշ սառը ավշուխ խմել, ու եթէ այդ ժամանակ ձեր բախտիցը մի կով ճանկէիք, առանց կուրծքը դարդակելու բաց էիք թողնել։ Այդ կարմիրները, երևակայեցէք, ոչ թէ միայն կովեր են պահում, այլ նրանց հորթերին էլ են դաստիարակում. վերջինների համար մի տեսակ հասակ առած հօտաղներ են զբաղուած։ Եւ այդ հորթերն ու կովերը ամեն տեսակի ու ամեն գոյնի են։ Դուք դուցէ ասէք. «Էհ լա՛ւ, ասենք թէ պահում են. ինչ օգուտ»։ Չէ, եղբայրներ, օգուտը անհամար է։ Նրա տեսակի ու գոյնի հետ փոխվում է և նրանց կաթի համը, և որի համը որ չտեսնէք — բերաններիդ ջուրը կը գնայ։ Մի տեսակը կայ, մեկոնի ցօղ են ասում. Աստուած իմ, այն ինչ բան է. մի կաթիլը մարդու հարբեցնում է. հարբեցնելով ասենք չէ հարբեցնում, բայց մի տեսակ ուրախացնում է, և այնպէս է անում քեզ, որ երկու ձեռքով կամենում ես գրկել ամբողջ աշխարհը։ Դեռ այս բոլորը չէ, ինչ-որ ես ձեզ պատմում եմ. նրանց մրջնաճուտերը, օրինակ, կերակրվում են միայն տաքացրած կաթով. և մի պէտք է տեսնէիք թէ ինչ տկզածներն են. ասում են մանկական հիւանդութիւն նրանք իրանց կեանքումը չեն տեսած։ Ահա թէ ինչ է նշանակում կանոնաւոր և օրինակելի անաանապահութիւնով պարապել։ Սիրելի համաքաղաքացիներս, լաւ բանից, երբ և լինի, օրինակ վերցնելը ոչ ուշ է, ոչ էլ ամօթ. դուք բոլորդ էլ գիտէք այն առածը, որ ասում է. «Լաւ է ուշ, քան թէ երբէք»։ Հիմի, ասացէք, խնդրեմ, լաւ չէ՞ր լինիլ արդեօք, որ մեր մի քանի ընդունակ երիտասարդները գնային նրանց մօտ, ուսումնասիրէին կաթնագործութիւնն ու յետոյ գային տարածէին մեր ժողովրդի մէջ։

Երիտասարդ զօրավարի ճառը մեծ ազդեցութիւն գործեց Հանդիսականների վրայ. երբ նա ցած իջաւ ամբիոնից, մի այնպիսի աղմուկ, դղրդոց, գոռում-գոչում բարձրացաւ, որ ազդային ժողովը այդ րոպէին նմանում էր Թուրքերի «չախսէյ-վախսէին»։

Զուր տեղը մայր-մրջիւնը այս ու այն կողմն էր ընկնում, սրա նրա փէշը քաշում, խնդրում, բարկանում, գոռում—լսող չկար։ Խեղճի ձայնն էլ այդ օրը մի քիչ կտրուած էր, այնպէս որ ոչ ոքի ոչինչ չկարողացաւ հասկացնել։

Այդ ժամանակ սրան նրան բոթբրթելով, կարմրտակած, քրտինքը երեսիցը վազելէն, ամբիոնին մօտեցաւ մի կարճլիկ լիքը սեւամորթ ու, դիմելով Կրծանին, ասաց.

—Խօսք կ'ուզեմ, պ. զօրավար։

Կրծանը նրա բեխիցը բռնեց, բարձրացրեց ու դրեց իր ուսի վրայ։ Այնտեղից մեր ատենաբանը մի աչք ածեց ամբողջ հասարակութեանն ու, երբ տեսաւ որ բոլորի ուշադրութիւնն իր վրայ է դարձրած, ասաց.

«Աղնիւ համաքաղաքացիներս, մենք բոլորս էլ, թէ սեւերը և թէ շէկերը մեծ համակրութիւնով լսեցինք նրա հետաքրքիր պատմութիւնը իր դէպի կովային թագաւորութիւնն ունեցած ճանապարհորդութեան մասին։ Մեզ ամենիս էլ դուրեկաւ նրա յայտնած միտքը—պարապել կանոնաւոր կթնագործութիւնով։ Միևնոյն ժամանակ ես կարծում եմ որ նրա յայտնած միւս միտքը—աշակերտել անասնապահներին, եթէ չասեմ որ դուր չեկաւ հանդիսականներին, գոնէ կարող եմ ասել թէ վերջին միտքը նոյնչափ լաւ տպաւորութիւն չգործեց, որպէս առաջինը։

— Ուղիղ է, ուղիղ է, ՞սս, լռեցէք, լսուեց զանազան տեղերից։

«Միթէ այդ միևնոյնը չէր լինի, որ մենք երկրագործներս գնայինք մէջքներս ծռէինք անասնապահների առաջ, որոնք հողագործութեան, ով գիտէ, այրուբէնն անգամ չգիտեն։ Չէ, եղբայր, այդ պատիւ չէր բերիլ մեր անուան։ Եւ վերջն այն կը լինի, որ մեզ անպատուելու համար, գուցէ մերոնց դատարկ ու փորփոշման տուն յետ

դարձնեն. այն ժամանակ պատերազմը անխուսափելի կը լինի։ Ուրեմն աւելի լաւ չէ՞ր լինիլ, որ հէնց պատերազմից էլ սկսէինք։ Յարձակումն գործենք, նրանց նախիրը քշենք անենք մեր կողմը, պրծաւ գնաց, էլ ոչ դէս ոչ դէն։ Ով որ պատերազմի կողմն է, թող բեխը բարձրացնի։

Նոյն րոպէին ամբողջ դահլիճը խոզանակ դարձաւ։

«Ինչպէս երևում է, ամենքդ էլ պատերազմն էք կամենում. մնում է մեզ միայն մի զօրավար ընտրել։ Իսկ ընտրողութեան մասին կարծեմ չիշելն անգամ աւելորդ է. բոլորի աչքը մէկ մրջիւնի վրայ է գցած, դա մեր հրսկայ-զօրավար Կրծանն է»։

«Կրծանը, Կրծանը», դղրդաց ամբողջ ամբոխը։

— Սիրելի համաքաղաքացիներս, ասաց իր կողմից Կրծանը, չգիտեմ, հաւատացէք, թէ ինչպէս յայտնեմ ձեզ իմ շնորհակալութիւնը. ես ինձ անարժան եմ համարում դէպի ինձ ունեցած այդպիսի հաւատարմութիւն ձեր կողմից։ Բայց ներեցէք, որ չեմ կարող այս անգամ կատարել ձեր կամքը, և ստիպուած եմ դրկել ինձ այդպիսի պատուից. ես անասնապահների զօրավարի հետ մնաս բարովելիս երդուեցի՝ միշտ բարեկամ մնալ նրա հետ։

Ամեն կողմից լսելի եղան բարկացած ու անբաւականութեան ձայներ. «Այդ մեր ինչ գործն է, թէ դու ինչպիսի անձնական յարաբերութիւնների մէջ ես»։—Դու իրաւունք չունիս հրաժարուելու, յանկարծ ճչաց նրա ականջի տակ սեւամորթ ատենաբանը։ Ազգը քեզ ընտրել է, իսկ քո պարտքն է հնազանդել։

—Ճանապարհ, ճանապարհ, լսուեց ամբոխի միջից—տեղ տուէք մայր-մրջիւնին անցնել. մայր-մրջիւնը խօսք ունի ասելու։

Ամբոխը ճեղքուեց, ու մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացրին հաստլիկ մայր-մրջիւնին ու կանգնացրին քարի

վրայ Կրծանի կողքին։ Նա ցաւակցաբար նայեց վերջինի վրայ, գրկեց նրան իր բեխով ու, դառնալով դէպի ժողովուրդը, ասաց.

«Սիրելի շէկ և սև զաւակներս, Կրծանը ընդունում է ձեր յանձնարարութիւնը և կ'աշխատի կատարել ձեր կամքը քանի կարելի է քիչ վնասով։ Արևի մայր մտնելու հետ նա դուրս կը քաշէ մեր ամբողջ զօրքը։ Իսկ հիմի ամենքդ գնացէք հանգստանալու. ամեն մարդ կը ստանայ կրկնապատիկ բաժին»։

Ամեն կողմից լսուեց.«Ապրի մայր-մրջիւնը, շատ լաւ վերջացրեց բանը»։

Ամբոխն՝ ուրախութիւնից բռնելով երեք ատենաբաններին — մայր-մրջիւնին, Կրծանին ու սեամորթին, մեծ ցնծութիւնով կեցցէ՝ բղաւելով՝ օդը թնդացրեց։

VIII

ԿՈՎԱՆՈՑԻ ԱՒԵՐՈՒՄԸ

Երն արդէն շատ վաղուց էր անցել գընացել. գիշերուայ խաւարը տիրել էր ամեն բան։ Զէկերն այս վերջին հանդամանքին էին սպասում։ Կէս գիշերին մօտ էր, երբ նրանց արշաւող գունդը խիստ կարգապահութիւնով ուղք կոխեց թշնամու երկիրը։ Այնտեղ հրամանատարը կանգնեցրեց զօրքը, դուսեկաւ նրա առաջ ու յայտնեց նրան իր արդէն որոշած պատերազմի ձևը։

—Դուք, տղերք, ամենքդ էլ լիշում էք մայր-մրջիւնի վերջին խօսքերը, ասաց Կրծանը, «յաղթել քանի կարելի է քիչ վնասով»։ Ուրեմն քաղաքի վրայ յարձակման մասին խօսելն անդամ աւելորդ է, մենք ամեն կողմից կը պաշարենք քաղաքն ու կը ստիպենք, որ իրանց կամքով մեզ տան անասունների մի մասը։ Իսկ գործն աւելի յաջողեցնելու համար, որպէս զի քաղաքը բոլորովին կտրուած լինի դրսից, քաղաքի շուրջը խրամատ կը բանանք։

Պաշարողներին կարծես ինքը բնութիւնն էլ էր օգնում։ Երկնքում ոչ լուսինն էր երևում, ոչ էլ մի աստղ։ Այնպիսի խաւար էր տիրած, որ եթէ մատդ տանէիր ընկերիդ աչքը կոխելու՝ նա չէր նկատի։ Կամաց-կամաց մօտեցաւ թշնամու զօրքը մրջնանոցին ու դգուշութիւնով, առանց մի որևէ ծպտունի, ձեռնարկեց հողային ամրութիւնների շինելը։

Առաւօտեան անասնապահ-մրջիւնների աչքերին բացուեց մի անսպասելի և անհաւատալի տեսարան։ Մրջնանոցի չորս բոլորը հողէ բարձր պատնէշ էր քաշած, որը անընդհատ հաստ շրջանակով պատում էր ամբողջ քաղաքը։ Իսկ պատնէշի յետևից շէկերի բեխերը, մի մեծ անտառ էին կազմում։

«Ի զէն», յանկարծ տարածուեց մրջնանոցի բոլոր անցքերում, և ով որ ընդունակ էր կռուելու՝ շտապեց դէպի մրջնանոցի գլխաւոր անցքն ու արօտատեղիին մօտ կանգնեցրած քաղաքային պատնէշը, որպէս զի քանի կարելի էր շուտ առնել թշնամու առաջը։

Բայց երևակայեցէք անասնապահների զարմացքը, երբ տեսան որ թշնամին մտադրութիւն չունի զուսդալ իր ամրութիւնից։ Միայն մի յաղթանդամ շէկ, երկար բեխերով, մի կանաչ ճիւղ ձեռքին բարձրացրած՝ դուսեկաւ ամրութիւնից և անվախ կերպով դիմեց դէպի մրջնանոցը։

—Պատգամաւոր։

Ծծանը՝ անասնապահների հրամանատարը, մի նոյնպիսի ճիւղ ձեռքին բռնած՝ դուսեկաւ նրա առաջ։

—Միթէ այդ դուք էք, պ. գնդապետ, զարմացած հարցրեց Ծծանը, երբ տեսաւ որ իր դէմ կանգնած էր իր նոր բարեկամը – մեր ծանօթ Կրծանը։

—Դժբախտաբար ես եմ, թէև այժմ էլ գնդապետ չեմ, այլ գեներալ և շէկերի բոլոր զօրքի գլխաւոր հրամանատար։

—Ես չեմ շնորհաւորում ձեր նոր աստիճանը, արհամարական քմծիծաղով ասաց Ծծանը։ Ասել է դուք այդպէս էք վարձատրում մեր դէպի ձեզ ունեցած հիւրասիրութիւնը։

—Ես ինքս ձեր ցեղի դէմ ոչինչ չունիմ, ասաց Կրծանը. իսկ դէպի ձեզ, monsieur Ծծան, ոչ թէ ոչ մի թշնամական միտք չունիմ, այլ ամենամօտիկ, ամենաբարեկամական...

—Շարեցէք, շարեցէք, ինչքան կ'ուզէք։

—Հաւատացնում եմ որ . . .

—Ի զուր, ես ձեր ոչ մի խօսքին չեմ հաւատալ։ Լաւ բարեկամութիւն է, էլ ասել չի ուզի։ Թողէք խնդրեմ այդ սուտ բարեկամութիւնը և ասացէք, ինչու համար էք շնորհ բերել մեր երկիրը։

—Թող այդպէս լինի, ինչպէս դուք կամենում էք, տխրած ասաց Կրծանը։ Ես երբ այն օրը վերադարձայ տուն, իմ տեսածից ոչինչ չէի մոռացել, այլ յափշտակուած ձեր կաթնագործութիւնով ես մի անզգուշութիւն, մի մեծ սխալ գործեցի՝ առաջարկեցի մերոնց օրինակ վերցնել ձեզանից։ Բայց մեր ժողովրդի մէջ տարածուած պատերազմական ոգին իմ կամքիս ընդդէմ վճռեց՝ ուժով խլել ձեզանից ձեր բոլոր անասունը, իսկ ինձ ընտրեցին իրանց գլխաւոր հրամանատար։ Ես թէև շատ ընդդիմացայ, բայց ինչ կարող էի անել ամբողջ ժողովրդի դէմ։ Ինձ հարկադրեցին։ Բայց ես չեմ կամենում ձեր մարդկանց արիւնը թափել, դրա համար առաջարկում եմ ձեզ իմ միտքս. տուէք մեզ ձեր անասունի կէսը և մենք ինչպէս եկել ենք, այնպէս էլ կ'երթանք։

—Մի հատն անգամ չէք ստանալ։

—Խոհեմ եղէք, խորհուրդ էր տալիս Կրծանը։ Ձեզ կը մնայ դարձեալ ձեր անասունի կէս մասը. իսկ դուք այնքան կատարելագործուած էք նրանց պահելու մէջ, որ մի տարումը կը կրկնապատկէք ձեր նախիրը։

—Մի հատն անգամ չէք ստանալ, վճռողական կերպով կրկնեց Ծծանը։—Տեսէք Է, ամբողջ տարի անխոնջ աշխատել ենք ու այսպիսի թանկագին տեսակներն ենք առաջ բերել. իսկ դուք, որ դրա համար մատով անգամ չէք շարժել, յանկարծ գաք ու ստանաք մեր աշխատանքի կէսը։

—Լաւ մտածեցէք, ասում էր Կրծանը. իմացած կացէք, որ դուք մեր ձեռքումն էք։ Մենք զինուորական ցեղ ենք,

մեր շղթան կտրել դուք երբէք չէք կարողանալ։

—Եթէ կամենում էք յարձակուեցէք, մենք մեզ պաշտպանել կը կարողանանք։

—Չէ, շնորհակալ ենք. մենք բոլորովին մտադիր չենք յարձակուելու քաղաքի վրայ, մենք կը պաշարենք ձեզ ու սովով կը ստիպենք անձնատուր լինել։

—Եթէ այդպէս է, դուք շատ երկար պէտք է սպասէք, մենք կերակուր ունինք։

—Չէ, խնդրեմ, ինձ խաբել չէք կարող։ Դուք չէիք, որ սրանից երկու օր առաջ ասում էիք, թէ ձեր ամբարները դեռ դատարկ են։

—Ամբարները, ճիշտ է, դատարկ են, բայց դուք մոռանում էք, որ մենք մի գովական նախիր ունինք. նա մեզ երկար կը կերակրէ։

—Ուրեմն դուք ձեր կամքով չէք կամենում անձնատուր լինել, հարցրեց Կրծանը։

—Ի հարկէ չէ։

—Եթէ այդպէս է, մենք ձեզ կը ստիպենք անձնատուր լինելու։

—Հետաքրքիր է թէ ինչպէս։

—Շուտով կը տեսնէք։

Երկու զօրապետներն էլ սառը կերպով գլուխ տուին իրար ու հեռացան։

Կրծանը վերադարձաւ իր բանակն ու խրամատում պատերազմական ժողով գումարեց։

—Միառմի իրանց խօսակցութիւնը պատմեց նա ժողովին և յայտնեց, որ նրանք յանձնատուր լինել չեն կամենում։ Ի հարկէ շուտով կը փուշմանեն, բայց նախ քան դիմել վերջին միջոցին—ուժին, ես ուզում եմ մի պատերազմական խորամանկութիւն գործ դնել։ Ուղիղն ասած՝ մտածածս շատ դժուար ձեռնարկութիւն է, և դրա համար էլ ոչ մէկին չեմ ուզում խառնել դրա մէջ. ինչ լինելու է, թող ինձ լինի։

Կէս գիշերին ես կը հեռանամ ձեզանից, և եթէ լուսաբացին չվերադարձայ, իմացէք որ բանս չյաջողուեց, և ես այլևս կենդանի չեմ։ Այն ժամանակ դուք կարող էք ձեզ համար նոր զօրավար ընտրել, որը և կը վճռի ձեր յետագայ գործունէութեան ձևը։

Ուղիղ կէս գիշերին Կրծանը հեռացաւ շէկերի վրանից. ո՞ւր, ո՞ր կողմը—ոչոք չգիտէր։ Միայն մի ժամ լուսաբացից առաջ թշնամու պատնէշի վրայ աղմուկ բարձրացաւ, որից յետոյ Կրծանը ընկաւ շէկերի խրամատի մէջ։

Նոր բացուող լուսաբացի աղօտ լուսով շէկերը սարսափով նկատեցին, որ իրանց զօրապետը սաստիկ վիրաւորուած էր. նրա յետին ոտներից մէկը բոլորովին կտրուած էր, մնացել էր միայն նրա յետքը. բացի դրանից նրա մարմինը մի քանի տեղ վիրաւորուած էր մրջնային այրող հեղուկով։

«Մի քիչ ցող», շշնջաց նա։

Իսկոյն նրան ցող տուին, վերքերը մի լաւ լուացին ու փաթաթեցին բուժական խոտով։ Այդ ժամանակ թշնամու բանակից լսուեցան զանազան յուսահատական ձայներ։

—Հը՞, տեսա՞ք, ծիծաղելով ասաց Կրծանը։

—Ախար այդ ինչ էք արել դուք այնտեղ, պ. գենեբալ, զարմացած հարցնում էին շրջապատողները։

—Գիշերը գնացի ու նրանց արօտատեղիի խոտը բոլորովին ոչնչացրի. հիմի կամաց-կամաց պէտք է անձնատուր լինին, որովհետև նրանց անասունը այլևս կերարուր չունի։

—Բայց ինչպէս կարողացաք մտնել նրանց արօտատեղին։

—Այ, բարձրացայ այն ծառի վրայ ու նրա վրայից թռայ նրանց արօտատեղին. միայն յետ դառնալիս ստիպուած էի գետնի վրայով գալ, այդ պատճառով ինձ տեսան և իրանց վրէժը հանեցին։ Բայց, բարեկամներս, ուղիղն ասած՝ ես բաւականին յոգնած եմ, թողէք մի փոքր հանգստանամ։

Նա ծածկուեց թերթիկով—վերմակով ու խոր հսկայական քուն մտաւ: Արևի դուսդալուն շէկերի խրամատին մօտեցաւ Ծծանը կանաչ ճիւղը ձեռքին բռնած: Քունը հանգստացրել ունոր ուժ էր տուել Կրծանին: Խրոխտ քաջի պէս նա առաւ կանաչ ճիւղն ու դիմեց երկու բանակները բաժանող գծին, ուր նրան արդէն վաղուց սպասում էր Ծծանը:

— Բարև ձեզ:

—Աստուծոյ բարին:

—Անձնատուր չէ՞ք լինում:

— Այո, միայն թէ ոչ առանց պայմանի, պատասխանեց Ծծանը: Ճիշտ է, արօտատեղիի ոչնչացնելովը մեր մէջքն էլ կոտրեցիք, բայց դուք գիտէք, որ ձմեռը մենք մեր անասունը պահում ենք տանը—կովանոցում: Ուրեմն լաւ թէ վատ, մի տարի կարող ենք եօլադնալ: Բայց կերակուրի պակասութիւնից անասունի մէջ ցաւ կարող է ընկնել, այդ պատճառով մենք համաձայն ենք զրկուել մեր նախրի կէսից . . .

—Մենք էլ, նրա խօսքը կտրեց Կրծանը, նոյնիսկ բոպէին վերջ կը տանք պաշարմանը:

— Սպասեցէք, խնդրեմ, թողէք վերջացնեմ խօսքս: Մենք էլ ձեզ պէս ազնիւ մրջիւններ ենք. իսկ եթէ առանց կռուի տանք ձեզ մեր անասունի կէսը, այն ժամանակ մինչև յաւիտեան կը կորցնենք մեր պատիւ: Սրա համար և կռիւն անհրաժեշտ է: Բայց մենք արընկերներ չենք, մենք չենք կամենում անթիւ մեզ նմաններին կեանքից զրկել, այլ կը բաւականանանք և նրանով, եթէ դուք համաձայնէիք մենամարտել ինձ հետ: Եւ եթէ դուք կը յաղթէք, վերցրէք անխօս մեր անասունի կէսն ու դնացէք, իսկ եթէ ես կը յաղթեմ,—վերկացէք շուտով սուսուփուս և փաստաթուղթերդ քաշեցէք այստեղից:

—Ուրեմն դուք առաջարկում էք մենամարտել մինչև վերջին շունչը, հարցրեց Կրծանը:

— Այո, մահ կամ կեանք. համաձայն էք:

— Ոչ:

— Ուրեմն դուք վախենում էք:

Կրծանը ոչինչ չպատասխանեց, այլ ցոյց տուեց նրան իր մարմնի այն տեղը, որտեղ ոտքի յետքն էր միայն մնացել:

—Այդ այսօր ձեզ այդ օրը գցեցին, մի տեսակ խրդճահարանքով հարցրեց Ծծանը:

— Ձեր արօտատեղիի դէնն է, կատակով պատասխանեց Կրծանը. մէկը միւսին արժէ: Բայց ինչպէս տեսնում էք դեռ հինգ ոտ ունիմ, դրանք ինձ բաւական են մինչև իմ վերջին օրը:

—Հինգ ոտ ունիք, ինքներդ էլ առողջ էք, բա էլ ինչու չէք կամենում մենամարտել:

—Որովհետև ինչպէս դուք ասում էք, մենամարտութիւնը պիտի շարունակուի այնքան, մինչև որ մեզնից մէկնումէկն ընկնի: Եթէ թողնեմ, որ դուք ինձ սպանէք, այդ կը նշանակէր մատնել իմոնցին թշնամու ձեռքը. իսկ ձեզ սպանել ես չեմ կամենում:

—Այդ ինչ մեծահոգութիւն է:

— Մեծահոգութիւն չէ, այլ բարեկամութիւն: Ես ձեզ, յիշում էք, երդուեցի յաւիտեան բարեկամ մնալ և երբէք ձեռք չեմ բարձրացնել ձեր վրայ:

Ծծանը կարծես կամենում էր մեկնել իր հաւատարիմ բարեկամին իր բեխը, բայց յետ քաշուեց:

—Ինչպէս գիտէք, ասաց նա սառը կերպով: Առանց մենամարտութեան մենք անձնատուր լինողը չենք:

—Մենք կարող ենք սպասել. շտապելու ոչինչ չունինք, ասաց Կրծանը:

Կրծանը պատրաստ էր երկար սպասելու, բայց նրա պատերազմասէր զօրքը այդպէս չէր մտածում: Պաշարումը

տեւեց մի երկու, վերջապէս երեք օր, բայց պաշարուածները անձնատուր լինելու մասին չէին մտածում անգամ։ Ընդհակառակ ամեն գիշեր նրանք յարձակվում էին շէկերի վրայ։ Ի հարկէ յետ քշել վերջիններին իրանց ամրութիւններից նրանց չէր յաջողվում, բայց նրանք այդ յարձակումներով դրդում էին պատերազմասէր շէկերին։ Կրծանը տեսնում էր, որ քանի գնում է բանը վատանում է։ Ասենք թէ դեռ այսօր հպատակում էին նրան, բայց վաղը կամ միւս օրը կարող էին առանց նրան հարցնելու յարձակուել քաղաքի վրայ։ շէկերի բոզոքն արդէն հասնում էր նրա ականջին։ Նրան մի միջոց էր մնացել, որին որ և դիմեց։

Երեկոյեան, երբ որ մութը սկսեց պատել դետինը, նա իր մօտ կանչել տուեց շէկերի ամենահարպիկ դետնափորներին և, յայտնելով նրանց իր միտքը, հրամայեց գործը սկսել։ Մի գիշերուայ միջոցում նրանք երկար դետնափոր անցք պէտք է բացանէին, որի մի ծայրը պէտք է հասնէր անառնապահների մրջնանոցին, ուղիղ կովանոցի մէջ։ Եթէ յանկարծակի այդ անցքով յարձակվէին շէկերը թշնամու վրայ, կարող կը լինէին առանց արիւնհեղութեան քշել տանել անասունի համարեա կէս մասը։

Այսպէս էր մտածում Կրծանը, բայց նա հաշուի չառաւ իր զօրքի պատերազմատէր ոգին։

Առաւօտեան անցքը ճիշտ որ բացուած պատրաստ էր։ Միայն թէ նոյնիսկ այդ բոպէին դետնափորներից ամեն մինը մի-մի գինուոր դառաւ ու պատերազմական ահարկու աղաղակով յարձակուեցան կովանոցի վրայ։ Այդ աղաղակը կարծես ընդհանուր արշաւանքի նշան էր։ Մի քանի բոպէում թշնամին ձեռք ձգեց մարտկոցներն ու քաղաքային դռները։ Յաղթողները մտան քաղաք ուր կարմիրները միայն՝ թոյլ կերպով պատասխանում էին թշնամու հարուածներին. նրանք միշտ յետ էին քաշվում և աշխատում էին ազատել իրանց կեանքը մրջնանոցի ամենախորհ և ամենահեռու անցքերում։

Զուտով կարմիրների բոլոր ոյժը կենդրոնացաւ կովանոցում։ Ձկարողանալով դէմ դնել շէկերի գնդերին, նրանք ամեն կողմից մեծ բազմութիւնով լցվում են կովանոցը։ Վերջապէս կովանոցը այնպէս լցուեց և յետևից դեռ այնքան գալիս էին, որ դետնափոր շէկերը, որոնք պատերազմում էին անցքի ծակի մօտ, էլ չկարողանալով դէմ դնել կարմիրների յորձանքին, ոկսեցին յետ քաշուել անցքով, իսկ կարմիրները ստիպուած էին գնալ նրանց ետևից. այնպէս որ կարմիրների համար, որոնք մի ժամ առաջ մատնուած էին արիւնարբու թշնամու ձեռքը, որը կապել էր նրան չորս կողմից, յանկարծ այդ նոր բացուած անցքը դարձաւ փրկութեան միակ միջոց։ Ամենքն շտապեցին դէպի անցքը, միևնոյն ժամանակ նրանք չմոռացան և իրանց անասունը. ամեն-մի մրջիւն ատամներով բռնած կամ կռան տակը դրած տանում էր մի հորթ։

— Բռնեցէք, ձեռքերիցը խլեցէք, գոռում էր Կրծանը, որը միւս շէկերի հետ դուրս էր դցուել անցքից, չկարողանալով դէմ տալ կարմիրների հեղեղին։

—Կանգնիր, աւազակ, պաշտպանուիր, յանկարծ լսուեց նրա մօտ մի ահարկու ձայն։

Նոյնիսկ այդ բոպէին յետևից թռաւ նրա վրայ Ծրծանը և պինդ բռնեց նրա մէջքը։ Կրծանը չէր էլ մտածում պաշտպանուել. թշնամին մի ակնթարթում կտրեց նրա մէջքն ու երկու մաս արեց նրան։ Հսկայ-մրջիւնի կրծքամասը՝ գլխի ու ոտների հետ բաժանուած փորամասից թռպրտում էր դետնի վրայ։

—Ա՜խ, ինչու չպաշտպանուեցիք, գեներալ, դառնացած ձայնով հարցրեց Ծրծանը։

—Նրա համար որ ես կամենում էի հաստատ մնալ իմ տուած խօսքին—շշնջաց մեռնողը։ Իմ բանս վերջացած է, խաղս տարուեցի, ասաց նա. ես էլ այս աշխարհի բնակիչը չեմ. քանի ժամանակ կայ, աշխատեցէք ձեր կեանքն ազատել։

Նա իր վերջին ոյժը հաւաքեց, մտաւ հողի մէջ ու անհետացաւ աչքից։ Ծծանը հետևեց նրա խորհրդին և ճիշտ որ կարողացաւ ազատել իր կեանքը։ Զէկերը՝ որոնք եկան իրանց զօրավարի օգնութեան, մեծ զարմանքով չորս կողմն են նայում ու ոչինչ չեն տեսնում. այստեղ, այստեղ, այս քարի տակ,—ոչինչ չկայ։ Նրանց հրամանատարը անյայտացաւ. չկայ ու չկայ։

. . . . . .

Այդ անմոռանալի պատերազմի օրից յետոյ անցան մի քանի տասնեակ տարիներ։ Իրանց հայրենիքից դուսարած անասնապահ-մրջիւններն օտար երկրում իրանց համար նոր մրջնանոց շինեցին, շինեցին և նոր կովանոց ու սկսեցին դարձեալ կաթնագործութիւնով պարապել. անասնապահութիւնը, հէնց կարծես առաջուանից աւելի զարգացաւ նրանց մէջ։

Հողագործ-մրջիւնների մօտ բոլորն առաջուայ պէս էր. դարձեալ նոյն օրինակելի հողագործութիւնը, դարձեալ նոյն պատերազմական ոգին, դարձեալ նոյն գերութիւնը։ Կրծանը բոլորովին ուղիղ էր ասում, որ նրա խաղը սարուած էր։ Զէկերի քշած տարած անասունը կարճ միջոցում բոլորովին ոչնչացաւ, որովհետև նրանց պահելը ոչ ոք չգիտէր։

Միայն Կրծանի, այդ փառաւոր հսկայ-մրջիւնի յիշատակը դեռ չէ մոռացուած նրա ժողովրդի մէջ։ Նրա քաջութիւնների մասին ժողովուրդը երկար լեգենդաներ ու հէքիաթներ է յօրինել։ Եւ ինչպէս վայել է հերոսին, նա սովորական մահով չմեռաւ,—կովանոցի տերման ժամանակ նա հալուեց արեգակի ճառագայթների մէջ։ Դոնէ այդպէս է պատմվում մրջիւնների ժողովրդական աւանդութիւնների մէջ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

900

51025000

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0005015